891.99
Բ-12

Ա. ԲԱԲԱԽԱՆԵԱՆՑ

# ՈԽՏԱԽՈՐԴ

# ՓՇԱՏԱԿԱՐԱՆԸ

1956
1885

ՄԻՆՉԵՒ ԹԱՂԱՒԱՐ։—ԳՏԻՉ։—ՄԵ-
ՌԵԱԼ ԱՒԱՆ ։—ՈԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ։
—ԴԻՉԱՓԱՑՏԻ ՎՐԱՑ։—ՉԿՈՒԱՏԱՓ։ ՕԽ-
ՏԸ—ԴՈՒՆԻ։

1906
891.99

ՇՈՒՇԻ

ՄԻՐՃԱՃԱՆ ՄԱՀՏԵՍԻ-ՑԱԿՈԲԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ։

1885

ԱՅՑԱՄԱՍՆ ՓՈՒՆՏՈՒՆԵՐՒ
ՅՈՒՇԱՄԱՏԵՆԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
3ո
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

*Дозволено цензурою 30-го ноября 1884 г.*
*Г. Тифлисъ.*

**Скоропечатня книгопродавца М. Мугдуси-Акопова, въ Шушѣ**

4401

# ՊԱՐՈՆ ՐԱՖՖԻՆ

ԽՈՐԻՆ ՑԱՐԳԱՆՔՈՎ

*նուիրում է*

Ա. Բաբախանեանցը։

## ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆ

Ձեր գրականական անխոնջ գործունէութեան միջոցում, աշխատելով միշտ հայի կեանքը իր բազմակողմանի երևոյթներով նկարել հանճարեղ պարզութեամբ, չէք մոռացել պատիւ անել Դ ա-րաբաղին, նուիրելով նրան Ձեր լուսաւոր աշխատանաց մի մասը. և դուրս բերելով անյայտութեան խաւարից նրա պատմութիւնը, Ձեզ յատուկ գրաւիչ և գեղեցիկ ոճով հասկացրիք այն աշխարհը, որի մասին մենք, երկրի իսկական բնակիչներս, ոչինչ հասկացողութիւն չունէինք։

Իբրև Ղարաբաղի հայ հասարակութեան մի երախտապէտ անդամ, ինձ համար քաղցր է այսօր պսակել Ձեր յարգելի անունամբ իմ այս դոյզն աշխատութեան ճակատը, յուսալով, որ Դուք չէք մերժել ընդունիլ այս նուէրը որպէս անկեղծ համակրութեան և չնորհակալ սրտի վկայմունք։

Ա. Բաբախանեանց։

# ՈՒԽՏԱՒՈՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

## Ա.

### ՄԻՆՉԵՒ ԹԱՂԱՒԱՐ

Յս 1884 Թուի Վարդավառի տօներին իմ բարեկամներից մէկը հրաւիրել էր ինձ գնալ իր հետ միասին Դիլիջան, որ բաւականին նշանաւոր և յայտնի ուխտավայր է։

Ոչ այնքան կրօնական ջերմ զգացմունքները հարկադրեցին ինձ ընդունել այդ հրաւէրը, որքան ուրիշ հանգամանքներ, որոնց միշտ հպատակուած է լինում մարդ, մանաւանդ ամառը, քաղաքների մէջ։ Երկարատև անշարժութիւնից յետոյ տենդել կրկին անգամ Ղարաբաղի գեղեցիկ տեսա-

րանները, հարուստ ու վայրենի բնութիւնը, մտնել գիւղական պարզ նահապետական կեանքի մէջ—այս ամենը այնքան հրապուրում էր ինձ, որ ես շտապեցի մի քանի օրով առաջ, այն է յուլիսի 12-ին, գնալ Շուշիից։

Նախ հարկաւոր էր գնալ Թաղլար գիւղը, որ բաւական հեռու է Շուշիից և գտնվում է պատմական Տող բերդի մօտ։ Ձանապարհը, որքան ներում է երկրի լեռնային բնաւորութիւնը, շատ տեղերում բաւական յարմար է, ինչպէս սայլերի, նոյնպէս և ձիանների համար։ Բայց շատ տեղ էլ նա իսկապէս անուանելի է դառնում, անցնելով խոր վէհերի, մացառապատ ձորերի և կիրճերի միջով։ Երեւևկութիւնը այդ ճանապարհով բաւական կենդանի է, որովհետև նրա չորս կողմում գտնվում են բազմամարդ հայ գիւղեր, որոնք ապրում են առատութեան մէջ։ Ձրի կողմանէ նոյն-

պէս առատութիւն են վայելում շրջակայքը. յաճախ պատահում են գեղեցիկ աղբիւրներ, գետակներ: Միակ անյարմարութիւնը, որպէս յայտնեցի, բնական արգելքներն են, որոնք անտանելի են կացուցանում ճանապարհը շատ տեղերում: Ինչ տեսակ ճանապարհ կարողացել է շինել մարդու ոտը դարերի ընթացքում, նոյնը անփոփոխ մնում է մինչև այսօր, յուսահատութիւն պատճառելով անփորձ ուղևորին: Այդ տեսակ դլուխը ճնշում է երկրի տնտեսականութիւնը. երթևեկութեան անյարմարութիւնը դրել է այդ կողմերի գիւղացիներին միմեանցից անջատուած դրութեան մէջ, որ բացատում է հանգիստ և արագ հաղորդակցութեան կարելիութիւնը և նրա հետ կապուած օգուտները: Բնութեան հարստութիւնը ապշեցնում է մարդուն, բայց պակաս հակասական ապրութիւն չէ պատճառում և գիւղացի-

ներկի համեմատական աղքատութիւնը: Եթէ գիւղացին ապրում է կուշտ փորով, դա դեռ նշան չէ նրա տնտեսական բարեկեցութեան: Իր բերքերը նա արտահանում է ուրիշ տեղեր խիստ աննշան քանակութեամբ, իսկ բոլոր ստացած բարիքը շաբաթաբար վաճառում է տեղը, իր տանը, սահմանափակելով իր հոդագործական գործունէութիւնը միայն տեղային պահանջներով: Սրա պատճառը, մեր կարծիքով, հաղորդակցութեան ճանապարհի վատութիւնը պէտք է համարել: Եւ այս միտքը անփոփոխ մնաց իմ մէջ մինչև նոյն իսկ Թալըարը:

Քօսիլով ճանապարհի մասին, անկարելի է լռութեան տալ մի տեղ, ուր ճանապարհը իսկապէս անտանելի է:

Թրիկնապահին մենք իջանք հանգրստանալու մի անտառապատ սարի ոտորտի մօտ: Ճանապարհը գնում է ձմակի միջով,

որ կոչվում է Խորհուրդ։ Բայց ի՞նչ ձանապարհ.—մի նեղ, ոլորուն շաւիղ, որ սկզբում է գալիս մի ահագին խորխորատի եզերքով։ Ամբողջ լեռնային լանջը և խորխորատը ծածկուած են հսկայական ծառերով, որոնք անտեսանելի են կացուցանում ուղևորից երկինքը։ Խորհրդաւոր լռութիւնը, մթութիւնը ձնշող, ծանր տպաւորութիւն են գործում մարդու վրայ։ Այդ ձանապարհն ունի ոչ աւել քան երեք քառորդ վերստ, բայց այդ տարածութիւնը անցնելու համար հարկաւոր է մի ժամ։ Ձիու զգոյշ և հանդարտ ընթացքի ժամանակ դուք զգում էք, կարծում էք թէ ձեր և վտանգի մէջ միայն մի մազ կայ։ Ու իրաւ, բաւական է մի անզգոյշ քայլ մի թեթև սայթաքումն և մարդ խորխորատի մէջ կլինի, որտեղից ծառերի սօսափիւնի հետ լսւում է լեռնային առուակի խուլ հոսանքը։ Անասուններըը շատ տանջ-

վում են այդ ձանապարհին. մինչև անգամ լեռնային քարոտ ուղիների սիրասուն որդին, ջորին, նա էլ շուտ շուտ սայթաքվում էր և մինչև սարի գլուխը գնալը ծածկվում էր քրտինքով, որ առաստաձեամբ թափվելով հողի վրայ, կապում էր թաց շերտեր։ Սարսափելի ծանակը քիչ քիչ ոչնչանում է գիւղացիների կացինների տակ. մի քանի տարուց յետոյ գուցէ կը վերանայ նրանից մշտական մթութիւնը. բայց մի՞թէ դրանով կանհետանան ձանապարհի միւս անյարմարութիւնները, որոնք առանց ծանակի էլ անտանելի են։ Եւ դեռ պէտք է աչքի առաջ ունենալ, որ այդ ձանապարհը ամենայարմարն ու ամենակարճն է Տիգակի և Վարանդայի մէջ։

Ճանապարհում խորհուրդ տուին ուղեկիցներից մէկը վերցնել։ Ես մերժեցի. ինձ կէսօրին այստեղ սպասելիս և կողոպտելիս են եղել մարդկանց։ Թակ այժմ ոչ միայն ցերեկով, այլ և գիշե-

ըը ապահով անց ու դարձ են անում այդ ճա-
նապարհով։ Առհասարակ ես նկատեցի, որ ա-
մեն տեղ տիրում է անդորրութիւն և երկիւղ աւազակներից բոլորովին չը կայ։ Գիւ-
ղացիք շնորհակալ էին Շուշիի գաւառապետ
պ. Գանզեէլիից, ասում էին, որ այդպիսի վարչական անձ վաղուց տեսած չենք։

Անցնելով Խորհատի միջով, մենք բար-
ձրացանք մի լեռնային շղթայի գլուխ։ Այդտեղից բացվում է շատ ախորժելի տե-
սարան։ Առանձնակի սարերը և լեռնային շղթաները, պատած խիտ հարուստ բու-
սականութեամբ, երևան են գալիս, կար-
ծես, մի գեղեցիկ պանօրամի մէջ։ Ինձ դէմ առ դէմ բարձրացած էր Տոլայ սարը, որի սուր գագաթը մինչև երկինք հասած է երևում։ Այդ սարը տեսնելուն պէս իմ մէջ զարթնեցան նրա անուան հետ կապուած պատմական անցքերի յիշողութիւնները։

Ինչ այդ յիշողութիւնները պատ-

էին գալիս իմ հիացած հոգու մէջ, իմ հետևից հասան մի քանի հետևակ գիւղացիներ. նրանք բոլորը կանգնեցին իմ ձիու մօտ և երեսները դարձնելով դէպի հարաւ-արևմուտ, սկսեցին ջերմեռանդութեամբ խաչակնքել: Երբ ես զարմացքով դարձայ դէպի այդ կողմը, մէկն ասաց ինձ.

—Մուրը Դիպափայան է. իմ երեսս նրա ուղի տակը:

Ես նայում եմ: Հեռու հորիզոնի վրայ, երեկոյեան կիսամթութեամբ պատած մի սար էր դա, որ իր բարձրութեամբ գերազանց էր միւս բոլոր այդ կողմի սարերից. և ահա այդ սարի գլուխը պիտի գնայինք մենք՝ հոչակաւոր նահատակների տանջանաց վայրը համբուրելու համար: Ես խօսակցութիւն սկսեցի գիւղացիների հետ Դիպափայտի մասին: Ոչ ոք որոշ հասկացողութիւն չունէր. միայն գիտէին այսքանը, որ նա մի շատ զօրաւոր սուրբ է, որ ամեն տարի

վարդավառին լոյս է գալիս նրա վրայ, որ շատ ցաւեր է բժշկում նա:

—Աստուած ուխտդ կատարէ, պարոն, կը գնաս, շատ լաւ բաներ կը տեսնես և միշտ մեր սուրբին ուխտաւոր կը լինես:

Այս խօսքերով գիւղացիները հեռացան և ես շարունակեցի ճանապարհս: Արդէն մութ էր, երբ հասայ Թաղլար:

Թաղլար մի բաւական մեծ գիւղ է (500 տուն): Հետևելով Դարաբաղի մէջ բացառութիւն չը սիրող ընդհանրութեան օրինակին, Թաղլարը տեղաւորուած է լեռնային զառիվայրի վրայ, որ աստիճանաբար իջնում է դէպի Դուրու-չայ անունով գետը, որ քերում է Տոլայ սարի ժայռոտ ստորոտները: Նայելով գիւղի արտաքին տեսքին, բնակիչների կեցութեանը, կարելի է ասել, որ Թաղլարը առհասարակ հարուստ գիւղ է: Այստեղ այնքան շատ չեն գետնափոր խրճիթները, որոնցից կազմուած

են լինում առհասարակ հայ գիւղերը, այլ պատահում են լաւ շինած նոր ձեւի տներ։ Բնակիչների մասնագիտութիւնը ածխագործութիւնն է։ Ձմեռը այդ արհեստով պարապվում են համարեա ամենքը և շուշիում ծախվող ածուխի բաւական մեծ բաժինը ընկնում է թաղլարեցուց վրայ։ Ածխագործութեան արհեստին շատ նպաստաւոր է փայտի առատութիւնը գիւղի շրջակայքում, որ իսկապէս զարմանալի է։ Ամառը գիւղացիք պարապվում են դաշտային աշխատութիւններով։ Գիւղի շրջակայքում կան շատ թթենու այգիներ. օդի հեհանութիւնը տարէցտարի աւելի շատանում է։ Անասնապահութեան ճիւղում թաղլարեցիք յայտնի ջորեպաններ են. համարեա ամեն տուն ունի մի քանի ջոտ։ Միւս տնային կենդանիները քիչ կան։

Այս գիւղում կայ հայոց հոգեւոր ծխական դպրոց, որի ուսուցիչ պ. Հովու-

հանցի մօտ իջայ ես։ Արձակուրդների պատճառով աշակերտներ չը կային, բայց ուսուցչի պատմութեան նայած, նոյնպէս և քննելով դիւղացիների վարմունքը, պէտք է ասած, որ կրթական գործը այստեղ դեռ նանձարուքի մէջ է գտնվում։ Ժողովուրդի յարաբերութիւնները դէպի ուսումնարանը կարող էին բաւական առատ նիւթ տալ որ և է ծագրաբանական թերթի....

Պատկելով քնելու, ես անհամբեր սպասում էի հետևեալ օրի բացուելուն, երբ կարողութիւն կունենամ տեսնել Տոլ քերդի երբեմնեան հզօր իշխանութեան աւերակները, տեսնել գտիչ անունով յայտնի վանքը։ Մի այսպիսի բուռն ցանկութիւն սկսել էր գարգանալ իմ մէջ այն ժամանակից, երբ յայտնի էր դարձել ինձ Ղարաբաղի նոր պատմութիւնը՝ շնոր հիւ պ. Րաֆֆիի աշխատանաց։ Ինձ շատ անգամ էր պատահել առաջներում անցնել Տոլ

դիւղի միջով, շատ անգամ էի տեսել նրա բերդը, հին պալատը, նոյնպէս նրա գըլխին բարձրացած ամեհի սարը, բայց ուշադրութիւն չէի դարձրած դրանց վրայ այն հասկանալի պատճառով, որ չէի իմանում, թէ ինչ երևելի պատմական անցքերի վկայ եղած է այստեղի ամեն մի քար, ամեն մի ժայռ։ Բայց երբ մեր բազմաշխատ հեղինակի մեզ համար մեծ գին ունեցող „Համառօտ Մեկնութիւնները“ առնում աշխատութիւնը բացից մեր առաջ անցեալի մթին վարագոյրը, ցոյց տալով նրա ետևում առիւծասիրտ հերոսներ, մինչև այսօր մնացած կենդանի վկաներ մեր հոյակապ պապերի գործունէութեան—այս ամենից յետոյ Տոլայ սարը խիստ հետաքրքրելի էր դարձել ինձ համար։

## Բ.

### Գ Տ Ի Զ

Վերջապես բացվեցաւ աչք օրը. յուլիսեան արեգակը կանգնեց պարզ երկնակամարի վրայ, տարածելով ամեն տեղ առաւիկ ջերմութիւն:

Ծարը բարձրանալու պայմանները շատ անհրապոյր էին: Մեր դժբախտութենից դիւղում չը կարողացանք գտնել անասուններ, որոնց վրայ կարելի լինէր երթևեկել գոնէ մինչև Գոխչ վանքը: Դաշտային աշխատանքների ամենաառաք ժամանակն էր, և գիւղացիներից ոչ մէկը չէր համաձայնվում ձի տալ մեզ: Իմ բարեկամը յորդորում էր յետաձգել գնացքը մի ուրիշ ժամանակի, նկարագրելով այն բոլոր դժուարութիւնները, որ անքաւան են այդ սարսափելի ուղեի ժամանակ սարը ոտով բարձրանալուց: Բայց ես անխախտ էի իմ վճռում

և, արհամարհելով ամեն մի դժուարութիւն, համոզացրի գնալ։ Մենք գտանք և մի ուրիշ ընկեր, որ սիրով համաձայնվեցաւ գնալ մեզ հետ։ Բոլորս էլ կարծում էինք, թէ շատ շուտ կը հասնենք վանքին, որ այնքան մօտ է երևում ներքևից։

Ուղիղ ժամի 11-ն էր, երբ սկսեցինք բարձրանալ դէպի Գոհչը։ Արեգակը երկնակամարի միջից անտանելի կերպով այրում էր. անշարժ օդը խեղդում էր իր ջերմութեամբ։ Հողը, կարծես, շիկացած երկաթ էր դառել և այրում էր մեր ոտները։ Այսպէս էր այն ժամը, երբ մենք սկսեցինք բարձրանալ Ղուրու-չայ գետի խոր ձորից։ Մեր առաջը ձանապարհ կամ լեռնային շաւիղ բոլորովին չը կար. պէտք էր անցնել մի քանի դեռ չը հնձած արտերի միջով, որոնցից վերև, ինչպէս ասում էին գիւղացիք, պիտի գտնէինք մի շաւիղ, որ տանում է ուղիղ դէպի վանքը։ Ճանապարհ

ընկանք։ Ջրիս կողմում ամեն տեղ, կարծես կրակ էր այրվում. սարսափելի, համարեա ուղղաձիգ զառիվերը, ծածկված չրացած խոտաբոյսերով, ամեն մի քայլում հարկադրում էր սայթաքվել և յետույետ գնալ։ Բայց մենք դէպի առաջ էինք մղւում, բռնելով ամեն մի պատահած թփից, ամեն մի խոտից։ Բոլորովին անսովոր լինելով երկար ոտով գնալու, այն էլ այդպիսի մի ճանապարհով, ես ստիպուած էր շատ շուտ կանգնացնել ընկերներիս, պատահած շուաքում նստել ու հանգստանալ։ Համարեա բոլորովին ընչասպառ, ուժասթափ ընկնում էի ես խոտերի վրայ և անվրդով վայելում էի հանգստութեան մի քանի քաղցրը րոպէներ։ Օրհնեալ հանգիստ. այնքան գերում էր նա մեզ ամեն անգամ, որ մեր շուրջը թփերի մէջ գալարվող սև օձերն անգամ չէին կարողանում որ և է երկիւղ ազդել մեզ վրայ։ Այսպիսի մի ձա-

նապարհորդութիւն այդ հրաշալի ճառագայթների տակ, այդ սոսկալի զառիվերով, հետիոտն, ես առնուազն անխելքութիւն կը համարէի դուցէ միւս ժամանակներում, բայց ոչ երբէք այդ տանջանքներով լի րոպէներում, որովհետև գիտէի, որ իւրաքանչիւր գժուար ոտած քայլի հետ, իւրաքանչիւր շարժուածքի հետ աւելի և աւելի մօտենում էի յանկացած նպատակիս, նպատակը, որ երկար ձեծացել ու հասունացել էր իմ մէջ, դժ էր տալիս իմ անզօր անդամներին, հոգուս մէջ ներշնչում էր մի անյայտ զգայմունք, որ աւելի ստուգիկ վառում էր ստուգիկ յանկութեանս բոցը:

Մի ժամից յետոյ մենք դուրս եկանք ոտների միջից և ընկանք մացառների և փշոտ թփերի մէջ: Ցուլիանան տապը հասնում էր կատարելութեան. ոչ մի ամենաթեթև քամի, ոչ մի փոքրիկ ամպ, որ

ծածկէր մի քանի րոպէ անոգոք արեգակը—ոչինչ չը կայ. իսկ այսուհետ մինչև այժմ եղած դժուարութիւնների վրայ աւելացաւ և այն, որ գառիվերը աւելի ուղղաձիգ է գառնում և թփերն ու մացառները անխնայ ծակոտում են մեզ ամեն կողմից: Դառն րոպէներ էին անցնում մեր գլխով...Բայց մենք էլի առաջ էինք գընում, շուտ շուտ հանգստանալով թփերի տակ:

Վերջապէս մենք հասանք գառիվերի գլուխը, որ կազմում է մի լեռնային բարձրաւանդակ, որը մի թեք տափարակով միանում է իսկական սարի հետ: Այդ տեղից երևաց վանքի գմբէթը: Մենք ապատ շունչ քաշեցինք և անհոգութեամբ ընկանք խոտերի վրայ. նոր վեր կացած լեռնային մեծ քամին քիչ մի կապդուրեց մեզ: Մենք վեր կացանք և քիչ ժամանակից յետոյ վանքի մօտն էինք:

Գոհչը մի փոքրիկ վանք է, ունի նոյպէս փոքրիկ դմբէթ: Նա կառուցած է սրբատաշ դեղնագոյն քարերից: Տեղի դիրքը բաւական գեղեցիկ է. ամառնային սաստիկ տապը, որ կիզում էր մեզ ներքևում, այստեղ մեղմանում է և չի խաշում մարդուն:

Գակը մոռանք: Մեզ դիմաւորից վանահայր Առաքել վարդապետ Կոստանդեանցը, մի առողջ և հաստ կազմուածքի տէր մարդ, որի վաթսուն և աւել տարիքը կարողացել էին գոյացնել միայն մի քանի աւելիքներ նրա խիտ մազերի մէջ. այնքան գեղեցիկ և բարեբեր են այս լեռնային մաքուր օդը ու հովասուն անտառապատ շրջակայքը: Վանահայրը շատ ուրախացաւ, որ իր երկարամեայ առանձնակեաց միանման մենակութիւնը այդ օրը մեր ներկայութեամբ մի քիչ այլազունվեցաւ: Նա ասում էր, որ այս վանքում նստած է

28 տարի։ Որքան համբերութիւն։

Մի քանի համառօտ խօսակցութիւններից յետոյ մենք շտապեցինք մտնել վանքը։ Նախագաւիթը, մի կիսախարխուլ ու խոնաւ շինուածք, վկայում է, որ վանքի հետ մի տեղ չէ շինվել, այլ աւելի յետոյ։ Այդտեղ կան մի քանի եպիսկոպոսների գերեզմաններ, որոնց արձանագրութիւնները մեզ չը յաջողվեց կարդալ։ Վանքի մէջը տանող դռների երկու կողմին կան հինանալի կերպով քանդակագործած խաչեր. երևում էր, որ այստեղից է սկսվում հին հայկական ճարտարապետութիւնը։ Վանքի կտուրը կանգնած է երկու սիւների վրայ, որոնք շինուած են սրբատաշ, խոնամքով կոկած քարերից։ Առհասարակ ներքին և արտաքին կողմից վանքի ճարտարապետութիւնը կրում է Բագրատունեաց ոճի կնիքը։

Ջիւսիսային պատի վրայ կայ մի եր-

ալձանագրութիւն, որից երևում է, որ վանքը շինել են երկու եպիսկոպոսներ Ամատասայ միաբանութիւնից, տէր Սարգիս և տէր Վրթանէս եղբայրները։ Շինութիւնը սկսվել է ըստ հայ տոմարի ՈՂ—690 (փրկչական 1241) թուականին, վերջացել է 695 թ.։ «Ուրեմն այս վանքը վեց ու կէս դարի ընթացքում դէմ է տուել իր ձակատը ժամանակի և բնութեան արհաւիրքների դէմ», մտածում է տեսնողը և այս միկը լցնում է նրա սիրտը մի տեսակ ընկճուած խոնարհութեան զգացմունքով այդ պատկառելի հնութեան առջև։ Այս զգացմունքը այնքան ուժգին էր իմ մէջ, որ չէի համարձակվում մի քանի ազատ քայլեր անել և դրանով վրդովել դարաւոր լռութիւնը։ Յարգել, և բոլոր սրտով պէտք է յարգել այս հնութիւնը, որ վեց հարիւր յիսուն տարի շարունակ ապրում է և մինչև այժմ չի կորցրել իր անպամների

ոյժը, ձկունութիւնը:

Ցեղոյ արձանագրութիւնը յիշատակում է իր ժամանակի քաղաքական սոսկալի անցքերի մասին: Նա ասում է, որ վանքը շինվել է շատ դժուար և դառն ժամանակ, երբ Նեռոպաց (*) ազգը աւերակ դարձնելով այս երկիրը, կործանեց աթոռը (Ամարաս): Եւ ուխտից մեր յիշած երկու եպիսկոպոսները քաշուելով այս անմատչելի տեղերը, հաւաքել են մի տեղ Ամարասայ միաբանութեան փշրանքները: Խիղճ նախանձք: Ջեզանից մնացած ամեն ինչը խօսում է միայն արտասունքի և աբեան մասին: Բռնաւորի ոյժը, սուրն ու հուրը հարկադրել են ձեզ փախչել սարերի քարանձաւները, թողնելով ձեր դպրութեան մասին այնքան շատ սխալ յիշատակարանները: Մինչև անգամ այս խուլ ու աւանձնացած անկիւնում, բնութեան այս ահռելի ամրութիւնների մէջ էլ լսվում են

1) Ն՛ինաց:

ձեր լացի ձայնը, ձեր աղետալից կանչի փոթորկալից հոսանքը, որ մարմնացել են այս պատի վրայ փորված՝ կիսով չափ եղծուած տողերի մէջ։

Նայելով չորս մշտալուռ պատերին, նայելով այդ արձանագրութեանը, ես հոգով սկսում էի մի քանի դար դէպի յետ և որպէս թէ տեսնում եմ վանքի միաբանութիւնը սրտաբեկ, դողահար շրջում է այս նուիրական սրբավայրում և երկիւղածութեամբ ծնկաչոք աղօթքներ է առաքում դէպի երկինք, աղաչելով պատարեցնել արիւնը, երկրի աւերումը..

Գուիչ վանքը հին ժամանակներում մեծ դեր խաղացած պիտի լինի այս կողմերի պատմութեան մէջ։ Դրա մասին վկայում է նոյն իսկ վանքի երբեմնեան անհագին հարստութիւնը։ Մեր յիշած արձանագրութիւնից իմանում ենք, որ վանքը իր հիմնարկութեան սկզբից ունեցել է

իբրև սեփականութիւն մի ահագին գաւառ, որի սահմանները եթէ այժմ փորձելու լինինք որոշել, պիտի երևան գայ մեր առաջ համարեա ամբողջ Տիզակը և Սիւնիքի մի մեծ մասը: Իսկ միաբանութիւնը, երևի, բազմաթիւ է եղած, քանի որ պատահում են եպիսկոպոսների գերեզմաններ: Բայց թէ ինչո՞ւմն է եղել այդ դերը, ի՞նչ է եղել վանքի ժողովրդեան հետ ունեցած յարաբերութեանց պատմութիւնը — այդ մասին մի տառ անգամ վկայ չը կայ, այդ ամենը ծնում է աւերիչ ժամանակի գաղտնիք: Ահագին կալուածներից մնացել են այժմ միայն մի փոքրիկ անտառ և մի քանի վարելահողեր սարի ուղղաձիգ գառիվայրերի վրայ, իսկ միաբանութիւնը կազմուած է միայն մի կուսակրօն հոգևորականից—Առաքել վարդապետից: Այս վարդապետը լաւ համարում ունի շրջակայքում. նա յայտնի է իբրև հմուտ հայկա-

բան: Մենք խնդրեցինք նրանից ցոյց տալ իր աշխատութիւնները: Նա բերեց մի հին քողով կապած փաթոթ: Կարդացինք: Դա էր Տիգակի Մելիքների պատմութեան սեւագիրը, մի մեծահատոր աշխատութիւն, որի մաքուր արտագրութիւնը գտնվում է պ. Բաֆֆիի մօտ *): Գրուածքի գրաբար ոճը թեթև, դիւրըմբռնելի է: Ինչպէս հաւատացնում էր հայր սուրբը, այդ աշխատութիւնը նա գրել է տասն և ութ տարուայ ընթացքում, հաւաքելով ձիգերիտ տեղեկութիւնները ժողովրդի աւանդութիւններից և այլ զանազան աղբիւրներից: Աշխատութիւնը իսկապէս գնահատելի է. դոնէ հայր սուրբը իր պատմութեամբ ապատել է վերջնական անյայտութիւնից Տոպալ Մելիքների զանազան երևելի գործերը: Հայր սուրբը շատ ցանկութիւն էր յայտնում տեսնել իր աշխատութիւնը ամ-

1) Տես «Խամս. Մելիք.» եր. 382—384:

բոլջապէս տպագրուած: Մեր կարծիքով վատ չէր լինի այդ բանը, եթէ Առաքել վարդապետի պատմութիւնը ամբողջապէս չի ամփոփուած «Թամնայի Մելիքութիւննե»-ի մէջ: Հայր սուրբը ցոյց տուեց և իր մի ուրիշ աշխատութիւնը, որը նա անուանում էր «պատմութիւն եկեղեցական անցից»: Այդ պատմութիւնը, իսկապէս ասած, արժանաւորութիւն չունի: Նրա մէջ հայր սուրբը նկարագրում է տեղային գանազան սուրբերի վարքը և նկարագրութեան ալբիւնները շատ տեղերում են իրա, հայր սուրբի, ծոմապահութիւնների և աղօթքների շնորհիւ տեսած երազները...Բայց առհասարակ Հ. Կոստանդեանցը բաւական հնաոէր և պրատէր մարդ է և միշտ արտայայտում է գովելի յանկութիւն ուսումնասիրել հնութիւնները, կազմելով գանազան տեղերի պատմութիւններ:

## Գ.

### ՄԵՌԵԱԼ ԱԻԱՆ։

Աբեգան արդէն թեքւում էր դէպի արեւմուտք, իսկ մեր առջեւում գեռ կար մի երկար ճանապարհ եւս, որ տանում էր Տոլայ սարի գագաթը։ Այնտեղ, ինչպէս պատմել էին ինձ գիւղացիք, կայ մի հին եկեղեցի, նոյնպէս և աւերակներ։ Ես վճռել էի տեսնել և այդ տեղը։ Թէև ընկերներս, մինչև անգամ վանահայրը, խորհուրդ չէին տալիս գնալ, բերելով ինչ ինչ պատճառներ, բայց ես յօժար էի ամեն բանի, միայն թէ կարողանայի տեսնել, թէ այդտեղ, այդ մինչև ամպերը բարձրացած սարի գագաթին ինչ աւերակներ կան։

Առաջել վարդապետը տուեց ինձ մի երկաթէ սրածայր գաւազան և մի հակայատիպ հրացանակիր ուղեցոյց։ Ես և ե-

կու ընկերներս ձանապարհ ընկանք : Մի քանի քայլից յետոյ մենք մտանք վանքապատկան հանդիսական առաջը, որ միաւորւում է սարի գագաթը պատող խիտ անտառի հետ մի բաւական լայն կիրճով, որ բաժանում է սարի ամենաբարձր ժայռոտ գագաթը հիւսիսային միւս ժայռերից: Այդ կիրճով էլ գնում է ձանապարհը: Նրբանից նայելով կարծում ես, թէ մի որ և իցէ տաճն բոպէում կարելի է հասնել գագաթին, այնքան մօտ է երեւում նա: Բայց իսկապէս յայտնուեցաւ, որ ամենաքիչը մի ժամ պէտք է գնալ մեծ դժուարութիւններով: Շուտով սկսվեց այն ուղղաձիգ զառիվայրը, որով ընկած էր մի լեռնային հարթ նշմարելի շաւիղ: Այդ շաւիղով արած մի քանի քայլերը իսկոյն ցոյց տուին, որ գետի ձորից մինչև վանքը տանող ձանապարհի նեղութիւնները գեռ ոչինչ են....Այնտեղ կարելի էր գո-

նէ մի կերպ ամրացնել մի ոտը՝ միւսը ա-
ռաջ տանելու համար. իսկ այստեղ այդ
էլ կարելի չէր...

Ճերմակ ծմակի մէջ տիրում էր
թանձր ստուեր, որ տեղ տեղ տեղի էր
տալիս արևի ուղղահայեաց սլաքանման ճա-
ռագայթներից գոյացած փայլուն շերտե-
րին: Զը նայած ստուերին, ծմակի մէջ օ-
դը խեղդող և անշարժ էր. սաստիկ տա-
ռը ճանապարհի խոչնդոտներից ազատ էր
նեղացնում մեզ: Բռնելով ծառի ճիւղերից,
խրելով գաւազանը գետնի մէջ, ես քայլ
առ քայլ ընթանում էի դէպի բարձր, մի
և նոյն ժամանակ քրտինքը յորդ անձրևի
պէս ծլւում էր իմ դէմքից: Մենք քայլերը
էինք համրում, և խրախուսվելով նրանից,
որ հետզհետէ բարձրանում ենք, թափում
էինք մեր ճիգը շարժվելու համար: Հաս-
նելով այս կերպ պատի պէս ուղղաձիգ ճա-
նապարհի համարեա կէսին, ես փշրվածի

պէս ընկայ մի մեծ քարի վրայ: Բոլոր ե-
րակներս քիչ էր մնում պատռուէին յու-
ժած տաքացած արեան ոյժգին պարկերից.
բոլոր անդամներս հանգստութիւն էին պա-
հանջում և ես բոլորովին ոյժ չունէի դի-
մադրել նրանց: Խակոյն մօտեցաւ ուղեցոյցը,
տուեց ջրով լիքը «փարչը», որ վանքից
վերցրել էր իր հետ. ես լուացի երեսս ու
գլուխս, որից մի քիչ զովանալով, կարողա-
ցայ նայել դէպի ներքև և ծանր զգայմուն-
քով դիտել այն սարսափելի պառիվայրը,
որ իսպառ ուժասպառ էր արել ինձ: Նա-
յում եմ ներքև, ահա ծառերի միջից ե-
րեւում է սպիտակ գլխարկ. դա իմ ընկե-
րըն էր, որ բաւական յետ էր մնացել. նա
զժուարութեամբ մագլցում է դէպի ինձ,
երբեմն կանգնում է, նայում ինձ վրայ....
վերջապէս նա էլ հասաւ ինձ մօտ և նոյն
փարչի օգնութեամբ զովացաւ: Մենք վեր
կացանք: Սարսափելի պառիվերը դեռ շա-

բունակվում էր. ձանապարհը լեռն էր քարերի անհամար մանր կտորներով և այս մեկը աւելի ևս դժուարացնում էր ընթացքը: Իմ միւս ընկերը բաւական առաջ էր դնացել և մենք զարմանում էինք նրա ոտանների վրայ: Ուրիշ դժգոհութիւններ խօսքերով արտայայտել միևնոյն մենք չէինք կարողանում, որովհետև սաստիկ յոգնածութիւնը արգելում էր խօսել: Ա՛յ, այդ քարոտ ձանապարհը, որով կարող էին գընալ միայն վայրենի այծերն ու կատուները, յուսահատացնելու չափ տանջում էր մեզ: Եթէ միայն այս ձանապարհով է ուղղել առաջուայ հաղորդակցութիւնը սարի գլխի հետ, պէտք է ուրախանալ միայն պարմանալ այն ժամանակուայ մարդկանց համբերութեան և ջղերի ոյժի վրայ:

Ուղեցոյցը պատմում էր, որ դեռ նոր ժամանակներում այս բարձրաբերձ ժայռերի ստորոտում, անտառի մէջ, գտնվել են

զանազան մանր անալին իրեր, եկեղեցական անօթներ, հրացանի ճխլոտաներ, մետաղեայ անօթներ, նոյնպէս և ոսկի ու դրամ:

Բայց ահա մօտ է պատիվների վերջը. մենք հասաքում ենք վերջին յիժներս, աւելի արագութեամբ բանեցնում ենք ոտներնիս և ահա մենք էլ սարի գլխին ենք: Տեսարանը իսկապէս ահարկու էր և խիստ ճնշող: Երևակայեցէ՛ք մի մեծ թանձրախիտ անտառ, ուր ծառերը հասնում են մեծ բարձրութեան. անտառի մէջ տիրում է խորին կախարդական լռութիւն. և նրա մշտական թանձր ստուերի մէջ դուք տեսնում էք աւերակների մի ամբողջ քաղաք, այսինքն լուռ մամռատառատ պատերի մի լաբիւրինթոս: Այդպէս էր և այդ աւերակների տեսքը. նրանք ճմլեցին իմ հոգին, որ պեռ չէր կարողացել ազատվել մինչև այդտեղ անցած տարածութեան ժուռա-

բան թիւնների ներգործութիւնից։

Ընդամէնը շրջապարիսպից ։ «Մի՛ թէ այդքան անասելի բնական բերդի համար դեռ հարկաւոր է եղել պարիսպ», մտածում է մարդ. «և արդեօք ինձ է եղել այդ ժամանակների ահն ու սարսափը»։ Մոտիկ մեռեալ բաղաքը կամաւ ասես, դեռ մնք կխաւսէ պատերի վրայով. բարերը համարեա բոլորովին մամռուն են գարձել և արտերի տեղերը նկատելի են մեծ մեծ փոսեր, որոց մէջ բուսած են գետապատ հասակի և տեսակի ծառեր։ Այո՛, մարդկային կեանքի ապառվելոց յետոյ, այս անշունչ աւերակների կոյսի վրայ դեռ պարզո է գալիս բուսական կեանքը իր բոլոր մեծութիւններով. մեծ ծառերը դղրդում են, բնկնում փտում են, իսկ նրանց տակից դուրս են գալիս թարմ ու ճկուն ճիւղեր, ճիւղեր...Մեռեալները միայն կեանք է սրտում, նրան է պարզեցնում,

խակ ամէն մի մեռեալ բան անխղճօրէն սառնահարում է, աչքացնում է, սպառում է։

Եւ ես քայլում էի այս մահուան քաղաքի, այս կոլծանեան վիճակի մէջ, անդադար երգելով քեմիս տակ յայտնի երգից.

Աչքեաց տեսեր աւերակաց,
Մեր հարց լերեալ անշուք շերմաց։

—Ահա և նկուղները, ասաց ուղեցոյցը, երբ մեզ գօտով ձմեռապարհ էինք բանում մացառների և մրմռանց հետ հիւսուած ճառերի միջով։

Ես կանգնած էի նկուղեցու մօտ, որ կառուցած է սալի ամենապարզ գաղափար կազմող ամենի ժայռի ճայրին։ Մի հայեացք այսահրից դէպի ցած, սալի սոսրոտը, աչքեր է մթնացնում։

Նկուղեցին մի հսկայական շինութիւն է, առանց գմբէթի, ներս մուտքը նեղ կո-

մը բոլորովին մերկ է. ոչ սիւն կայ, ոչ մեծ լուսամուտներ. մերկ բեմը գետնից հազիւ կէս արշին բարձրութիւն ունի. գերեզմանային խոնաւութիւնը իսկոյն զարկում է մարդու դէմքին: Եւ այս «անշուք ու լքեալ» աւերակը մի ժամանակ թնդում էր երգեցիկ խմբի և այս մեռեալ քաղաքի բարեպաշտ ժողովրդի սաղմոսերգութիւններից . . . Իսկ այժմ:—Իսկ այժմ գերեզմանական լռութիւնը չի խանգարում ո՛չ մի սօսափիւն, ո՛չ մի շշունջ, և սա վախեցնելով ձնշում է մարդու սիրտը: Ես և երկու ընկերներս դրեցինք մեր անուննները պատերի վրայ և դուրս գնացինք այդ տխուր և փառապուրկ սրբավայրից:

Աւերակների մէջ մենք երկար որոնում էինք մի որ և իցէ գերեզման, մի արձանագրութիւն, բայց ոչինչ չը գտանք: Միայն եկեղեցու մօտ գտնվող մի գերեզմանաքարի վրայ կարողացանք կարդալ հետս

տառեր «պետի» և այլ ևս ոչինչ: Աւերակները, ինչպէս ցոյց տուեց ուղեցոյցը, ընկած են բաւական երկար պէպի արևելք և հարաւ.նայած ցոյց տուած տեղին, պէտք է ասել որ այդ աւանը (գուցէ և քաղաքը) բաւական մեծ է եղել: Տներից շատերը ունին կիսաբոլորակ ձև, իսկ մի քանիսները ձուաձև են: Ջուր չը տեսանք բոլորովին այդ կողմերում:

Թհարկէ, երկար և մանրամասն հետազօտութիւնները գուցէ կարողանային ուրիշ ուշադրութեան արժանի բաներ երևան հանել, բայց ցաւ ելով պիտի ասեմ, որ ժամանակի սուղ լինելու պատճառով երկար այստեղ մնալ չը կարողացանք: Վերջին հրաժարական հայացքը գցելով անտառի խորքում գտնվող լուռ աւերակներին, մենք սկսեցինք իջնել սարի գլխից:

Ես մտածում էի.ինչ տեղ է եղել սա, ինչ անուն ունեն այս աւերակները, ո՞ր

ժամանակի մնացորդն են ներկայացնում: Եւ իրաւ, սրանք մի մի հանելուկներ են, որ թողել է պատմութիւնը: Այդ կողմերի քաջ ծանօթ Առաքել վարդապետն էլ չը կարողացաւ որ և է պատասխան տալ այդ հարցերին: Նա ասում էր, թէ հաւանական է, որ աւերակները մնացել են ամենահին ժամանակներից: Նա համաձայն չէր այն մտքին, թէ գուցէ Տոլայ մելիքների ժամանակից են մնացած:

Ենթադրել կարելի է, թէ սաստիկ տագնապի ժամանակ այս աւերակները բնակիչների և զօրքերի ապաստանարան են դարձած, բայց բերդի հիմնարկութիւնը մելիքներին վերագրելը, Առաքել վարդապետի ասութեամբ, բոլորովին սխալ է: Եւ իրաւ, միթէ չի՞ կարելի ենթադրել և այն, որ սարի գլխի շինութիւնները սկսվել են գահիճ վանքի հետ մի ժամանակ, երբ վանքի հիմնադիրները հաւաքել են ի-

բանց քայքայված վիճակը Տոլայ դժուա-
րամատչելի բարձրութիւնների վրայ: Չի՞
կարելի ենթադրել, որ մի ժամանակ վան-
քի հոգևոր իշխանութիւնը միացած բեր-
դի մարմնաւոր իշխանութեան հետ, ընդ-
դիմադրում էր Նեռոլայ Թշնամի ապգին:
Ինչ և իցէ, բայց ոչինչ հաստատ և որոշ
բան չկայ Տոլայ սարի գլուխը պահպ
աւերակների մասին և դա շատ ցաւալի
է: Առաքել վարդապետը սարի հիւսիսային
կողմից, վանքի հանդէպ, ցոյց տուեց մեզ
մի մեծ ձեղքուածք և ասաց, որ դա մի գալտ-
նի ճանապարհ է, որ սարի միջով գնա-
լով, դուրս է բերում աւերակների մէջը:
Ո՞ր աշխատանք է վատնուել այդ բանի
վրայ: Ուրևակայեցէ՛ք. սպիտակ կարծր քարի
ահագին միապաղաղ ժայռը, որ կազմում է
սարի վերին մասը, ծակուած է և բաւա-
կան հեռու տարած: Եթէ մեր նախնիք-
ներին թողէին հանգիստ նստել իրանց

երկրում, գուցէ այժմ մենք ականատես կը լինէինք աւելի փառահեղ և գեղեցիկ պատմական յիշատակարանների, քան զանազան պատերազմական ամրութիւններ, կիսաւեր պարիսպներ լեռների քարանձաւներում և անմատչելի բարձրութիւնների վրայ: Բայց խեղճ հայի ձեռքը երբ է բաժանուել իր մարմնի վրայ լայն բացուած վէրքերից. նա միայն աշխատել է կանգնեցնել նրանից ծորող արիւնը և այդ է եղել նրա պաշտօնքը:

Պ. Րաֆֆին ոչինչ չի խօսում աւերակների մասին, մինչև անգամ չի այցելել նրանց: Յայտնի է, որ մէլիքների ժամանակակից անցքերը պատյա են եկել սարի միւս կողմին, Համամլեա սուրբ մօտ, Տող բերդում, որ այժմ էլ կայ, բայց այդ բարձր և անմատչելի տեղը կանգնած աւերակները էլ խօ որ և է անցքի վկայ եղած են...

Ըստած գտիչի արևելեան կողմին,

պատերից թափուած քարերի վրայ, մենք երկար խօսակցում էինք Առաքել վարդապետի հետ զանազան անցքերի մասին։ Գալով վանքի ներկայ դրութեանը, հայր սուրբը գանգատւում էր, որ իր և վանքի վրայ հոգևոր իշխանութիւնը ուշադրութիւն չի դարձնում։ Վանքը քիչ քիչ քայքայւում է դրսից. արևելեան և հարաւային կողմից բաւական քարեր են թափվել։ Ի՞նչ կլինի, եթէ մի քանի տարուց յետոյ այս վանքն էլ դառնայ միանձնօս աւերակ, չղջիկների և բուերի տխուր բնակարան... Գոնէ մեր պերճասէր շուշեցիք քիչ մի հոգային պահպանել իրանց պապերի թողած այս գեղեցիկ շինութիւնը . . .

Արեգակը վաղուց մայր էր մտել, մենք սկսեցինք իջնել ցած, դէպի թաղլար։ Այդ տեղերից ես տանում էի ինձ հետ խիստ տխուր յիշողութիւններ, որոնք չէր թողեցին ինձ մենչև անգամ անկողնում. . . .

Եւ համարեա մոռացել էի, որ միւս օրը, շաբաթ վաղ առաւօտեան, պիտի ուղևորվինք դէպի Դիլափայտ։

## Գ.

### ՈԻԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ։

Յուլիսի 14-ի գիշերուայ ժամի երեքէն շատ կանուխ բարեկամս զարթեցրեց ինձ։

«Գեռ շատ է վաղ», ասացի ես, բայց յայտնուեցաւ, որ ամբողջ գիւղը մեզանից շատ առաջ է ոտքի կանգնել. խաւն ապրումը ցոյց էր տալիս, որ բոլորը պատրաստվում են ուխտ գնալ առաւօտեան հով ժամին, որպէս զի ազատվեն օրուայ խեղդող տապից։ Մենք ևս սկսեցինք պատրաստվել և կէս ժամից յետոյ արդէն ճանապարհին էինք։

Ընդհակ դեռ բոլորովին չը կար. օդը թարմ էր և զովարար։ Բաւական տարի-

ներից յետոյ էր, երբ ինձ վիճակուեցաւ կրկին լուսացնել ամառնային գիշերը բայօթեայ, գիւղական հարուստ և չքնաղ բնութեան մէջ։ Եւ բնութեան կարճատև քնից զարթնելու պատկերը խիստ կենդանանում էր և հրապուրիչ դառնում հեռուից լսվող խաղաղ ու մեղմ խօսակցութիւնների ձայներից. դրանք ուխտաւորներն էին, որոնց սակայն մենք չէինք տեսնում։ Ապանդակելով ձիանները, մենք շուտով հասանք մի խառնիձաղանձ ամբոխի, բաղկացած ամեն տեսակի և հասակի մարդկանցից, որը հեռուակ, որը ձիու վրայ, որը ջորու վրայ։ Ջերմեռանդ հայուհիները համարեա բոլորը ոտով էին գնում, շատերը բոբիկ։ Դա էլ մի նախնական սովորութիւն է, որ պահվել է միայն գեղեցիկ սեռի [1]) մէջ. նրա

1) Հայ կինը ընտանեկան կեանքի մէջ ներկայանում է ինչպէս մի առանձին մարմին, որ պահպանում է նախնական սովորութիւն-

կարծիքով, սուրբը աւելի ընդունում է ոտաբոբիկ գնալը և միշտ կատարում է այսպէս գնացողների ուխտը: Եւ այսպէս, այդ ամբոխը ձգուած ձանապարհի երկարութեամբ, կազմում էր շարժվող մարդկանց մի երկար գիծ, որի գնացքի կարգը յաձախ խանգարվում էր ուխտաւորների յետ մնալովը

---

ները ամենայն սրբութեամբ. նա միշտ հարատած է մնացել հայութեան, լեզուին և բոլորովին պահպանել է հայ կնոջ պատմական առանձնայատկութիւնները, չ'ենթարկվելով ոչ մի տեսակ արտաքին ազդեցութեան: Այդ խոստովանում են և տղամարդիկ: «Եթէ մեր ժամանակ մնացել է սիրտ, հոգի, բարեպաշտութիւն, դա միայն կանանց մէջ է», ասում են նրանք: Մեզ հաստատապէս յայտնի է, որ ուսման ազդեցութիւնն անգամ չի կարողացել առ այժմ խլել հայ կնոջից նրա պապական սովորութիւնները, ուսում առածներն էլ ջերմեռանդ պաշտպան են նախապաշարմունքների:

կամ առաջ ընկնելովը: Դրանք բոլորը թափ-
լարեցիք էին. գիւղն մեծ մասը այստեղ
էր . . . Խօսակցութիւնները, միևը միւս-
սից անկեղծ, միևը միւսից աւելի տոգոր-
ուած նահապետական պարզ սովորութիւն-
ներով, անընդհատ շարունակվում էին մարդ-
անց այս երկար շարքի մէջ: Ահա մի ձի-
ու վրայ նստած են մի առոյգ ծերուկ ու
նրա կինը. դեռ բաւական չէ դա, ծերուկի
առաջ տեղաւորվել է նրա չափահաս տղան.
ուժեղ ձին բաւական դիմացկանութեամբ տա-
նում է այս համարեա մի ամբողջ ընտա-
նիքը:

—Պարո՛ն, դու էլ ես գնում մեր սուրբը,
պատնում է դէպի ինձ ծերուկը:

—Ինչպէս չէ, ես էլ եմ ուխտ գնում,
պատասխանում եմ ես:

—Աստուած լսող լինի: Մեր սուրբ Դի-
գափայեի պէս ղօրաւոր խաչ իսկի չը

կայ: կեանքում մի վարպետ չեմ անցկացրել առանց նրա սուրբ զօրութեանը ուխտ գնալու:

Եւ Ծերուկը խիստ ջերմեռանդ կերպով խաչակնքեց երեսը:

—Երևի շատ մարդ կը լինի այնտեղ, հարցնում եմ ես:

—Ինչպէս չէ, ամեն տեղից գալիս են. և ամենի ուխտն էլ կատարում է:

Այդ ժամանակ արևի առաջին շողերը ողջունեցին մեզ: Մենք անցնում էինք մի լեռնային բարձրութեան մօտով, որի ստորոտում գտնվում էր սպիտակ թախիտ ծառերով. տեսարանը շատ գեղեցիկ էր և ես անյագ նայում էի դէպի այդ կողմը: Ծերուկը դեռ ինձ հետ էր գնում:

—Դու էլ գիտես, որ այնտեղ է գտնվում Օխտը-դռնին, հարցրեց նա, խաչակնքելով երեսը:

—Ո՛չ, չը գիտեմ: Ինչ է դա:

—Մուրը է, պարոն, շատ գործաւոր սուրը. աչքացաւի բժիշկ է: Ճշմարիտ է, մի սուրբի մօտով միւս սուրը գնալը լաւ չէ, բայց մենք մեղաւոր ենք, անուամ ենք: Եւ սուրբ Դիզափայտը ախր սրանից գործաւոր է:

—Վնաս չունի, ասացի ես, Օխտը-գունին ուխտ կը գնանք Դիզափայտից վերադառնալիս: Կարծեմ չի բարկանայ . . .

Մենք առաջ ենք ընկնում: Շուտով հասնում ենք մի ուրիշ խումբի. այստեղ էլ ուրիշ տեսակ խօսակցութիւններ են, բայց դրանց մէջ էլ անփոփոխ է նահապետական անկեղծ պարզութիւնը՝ խառն կրօնական ջերմ զգացմունքի հետ: Գանվելով այսպիսի շրջանում, մարդ մոռանում է իրական ներկան և փոխվում է երևակայական անցեալը, ուր հայի կեանքը տեսնում ես մի շրջանակի մէջ, որ հիւսուած է աւանդութիւններով սրբագործված սովորութիւններից . . . .

Ցրևակայութիւնը աւելի բանաստեղծական փայլ է ստանում բնութեան վայրենի և գեղեցիկ տեսարանների առջև: Ձանապարհն անպատար անցնում է խիտ ծմակների միջով, խոր ձորձորների եզերքով, և ամեն տեղ գեղեցիկ բնութիւնը շլացնում է իր զարմանալի հարստութեամբ: Պատահում է, օրինակ, ամբողջ մի լեռնային շղթայ ծածկված ծառերով. կարծում ես, որ եթէ այնտեղ ասեղ գցես, դարձինը չի ընկնիլ: Բայց ահա դրան մի ներհակ տեսարան. կանգնած է բոլորովին լերկ ու ծառազուրկ սար: Տպաւորութիւնները փոխվում են ամեն մի քայլում և դու միայն ափսոսում ես, որ բանաստեղծ չես, որ չես կարող երգել բնութեան այս ահաւոր և մեծասքանչ զարդերը:

Ճանապարհին յաճախ պատահում էին թափառական թուրքեր: Նրանք իջնում էին սարերից դէպի ցած, այրուած հովիտ-

նները: Նրանց շարժական անները, կայքերը թափառում են իրանց հետ միասին մի քանի հատ եղնների վրայ, որոնք մի քանի հատ ուրիշ տեսակ կենդանիների և մի քանի շների հետ կազմում են նրանց ամբողջ հարստութիւնը: Ուրքան խելօք են նրանք: Կիսամերկ, ոտաբոբիկ, պատառած ոտրմելի ցնցոտիներով, որոնց տակից երևում է նրանց մարմնի պղնձագոյն մորթը, ջերմանոտպատների և հովատան լեռների այդ հարստատ զաւակները կոխ են տալիս իրանց ոտներով ահագին տարածութիւններ, հպատակեցրով ամեն մի դէպքում բնութեան քմահաճութիւններին: Երջանիկ են նրանք իրանց անշուք կեցութեան, նեղութիւնների ու վշտերի մէջ: Նրանց անպահանջները այնպէս պինդ են, որպէս այդ ապատաժինները, որոնց ոտնահարում են նրանք. բայց աւելի պինդ է նրանց հոգեկան ոյժը, անձնապաշտպանու-

թեան քաջ զգացմունքը: Հանդարտ ժամանակը նա մարդկու թեան մի հաստարակ անդամն է, իսկ վտանգի մէջ—մի կատաղի գազան . . . . Եւ այս հանգամանքի շնորհիւ նա մնում է իր վայրենի կեցուցուածքի մէջ, հեռու առաջադիմու թիւնից: Գալիս է ամառը, Թափառականը հովասուն լեռների հարուստ կանաչների և ստուերախիտ անտառների մի անբաժան մասն է. գալիս է ձմեռը—նա թողնում է իր սարը և որջերը փորելով անապատի խորքերում, ապրում է այնտեղ: Ահա նրանց կեանքը: Իսկ ո՞րտեղից էին գալիս նրանք: Շուտով յայտնվեցան և այդ տեղերը: Դրանք սարերն էին, և այնքան բարձր, որ նրանց վերայ բացի գեղեցիկ կանաչ խոտից ոչինչ չի բնում: Ալպիսի սարեր մի քանիսը կային, սարերի մի խումբ, որի մէջ հպարտութեամբ իր գլուխը տարել է մինչև երկինք Դիսափայտը:

Հրաշալի էր բնութիւնը։ Այստեղ նա դեռ իր թարմ կանացի երիտասարդական հասակում էր գտնվում և ինչպէս մի նաղելի օրիորդ փառում էր իր շուրջը անուշահոտութիւն, քնքուշութիւն և մի տեսակ գերբնական փայփայող մեղմութիւն, որ բարերար ազդեցութիւն էր գործում մեր անդամների վրայ։ Մենք անցնում ենք մի քանի այդ տեսակ փափուկ թաւիշեայ խոտով ծածկված բարձր բլուրների և սարերի մօտով։ Այնքան ախորժատես են նրանք, որ ատիպուած կանգնում ես և երկար, երկար նայում։ Բայց աւելի գերում է տեսութիւնը Դիզափայտը։ Այդ հսկան, որի բարձրութեան հետ չի կարողանում մրցել ոչ մի սար Տիզակում, այստեղից, մօտիկից, կանգնում է տեռնոյի առաջ իր ձնշող վսեմութեան և մեծութեան մէջ։ Նա ոտքից գլուխ հագած է պարմանալի կանաչ գեհատ.

մի թուփ, մի ծառ չը կայ նրա վրայ: Միայն վերևում նա ունի սպիտակ պսակ. դա ահագին ժայռերն են, որ կազմում են նրա գագաթը, որ այնքան բարձր է գնացել: Որպե՞ս պէտք է բարձրանալ մինչև այնտեղ. այս հարցը հարկադրում է մտածելամեն մէկին: Մինչև անգամ լեռնաբնակ գիւղացին, որ ծնվում ու մեծանում է սարսափելի դարուփոսների, զառիվայրերի վրայ, անանցնելի կիրճերի մէջ,—մինչև անգամ նա էլ մի կերպ ծանրութեամբ է նայում դէպի վեր:

Բարձրանալը իսկապէս սկսվում է մի աղբիւրի մօտից, որ հոսում է մի կանաչազարդ ձորից. նրա անունն է Քօշի—աղբիւր: Աղբրի մօտ հաւաքվել էր մի ահագին ամբոխ, երբ մենք մօտեցանք նրան: Ջուրն այնքան ցուրտ է, որ միանգամից կէս բաժակ խմել անկարելի է: Եւ այս երբ:—Ցուլհսեան խելագոլ տօթերի ժամա-

նակ, երբ ամեն ինչ այրված, խորոված է լինում արեգակի տակ։ Ջուրը, երևի, գալիս է շատ բարձրից և միշտ սառը հողի տակ ընդունում է այդքան ցրտութիւն։ Բայց հէնց որ մի քանի րոպէ մնում է օդի մէջ, իսկոյն կորցնում է ցրտութիւնն և այն ժամանակ շատ անհամ է լինում։

Ձմեռը բոլորն էլ հանգստանում են, պատրաստվում են բարձրանալ դէպի գագաթը։

## Ե.

### ԴԻՋԱՓԱՅՏԻ ՎՐԱՑ։

Ճանապարհը Քօշի աղբրից մինչև գա-
գաթը նոր է շինվել. նա ահագին պատյա-
ներ է գործում սարի բոլորովին ուղղաձիգ
լանջերով. բայց չը նայած դրան, ճանա-
պարհն էլի շատ զառիվեր է և դժուար-
ելանելի։ Մինչև սարի գագաթը օձա-
պատյտ ճանապարհի վրայ երևում էր գնա-
ցողների օձապտոյտ երկայն շարքը. շարժ-
վում էին կրնայի դանդաղկոտութեամբ. այ-
լապես էլ անկարելի է։ Ձիանները մեծ դժու-
արութեամբ էին կարողանում դէպի վերև
մի քանի քայլ անել։ Գնալով քիչ տեղ, նը-
րանք կանգնում էին. և այսպէս պէտք էր
մնալ տասն կամ տասն ու հինգ րոպէ,

մինչև կենդանին մի քիչ կը հանգստանայ, ոյժ կառնէր. և յետոյ նոյն դանդաղկոտութեամբ շարժում էր ոտները և կրկին կանգնում:

Ջանապարհը այժմ էլ, իր նորոգուած դրութեան մէջ, վտանգաւոր է. միշտ ելկիւղը պատած է լինում մարդուն. մի թեթև ծուռ շարժուածք, մի սայթաքումն բաւական է, որ ձիաւորը ձիու հետ թըռչէ սոսկալի խորխորատների մէջ: Պատմում էին, որ Ճանապարհի անմշակ ժամանակը տարի չէր անցնում առանց փորձանքների. տարի չէր անցնում, որ մի քանի անասուններ չը գլորվէին դէպի ցած, հասնելով գառիվայրերի վերջին մսի և ոսկորների մի զանգուածի ձևով:

Ցայելով շուրջը, դէպի ներքև, դէպի վերև, մարդ զարմանում է, թէ ինչպէս այն հին ժամանակները յապաստան են գըտել այս բարձրութեան գլխին նահատակ-

նները և ինչպէս են սպանել նրանց հալա-
ծողները: Եւ Դիզափայտի ցայտաւուրքից
յայտնի պատմութիւնը [1]) իր բոլոր ման-

1) Ահա այդ պատմութիւնը համառօտո-
րէն. Նոնաց Թագաւորի առաջապահ զօրքերը
յարձակվելով Արցախի վրայ, ասպատակում
են շատ տեղեր: Այդ զօրքի գլխաւորը գերի
է առնում Եսրոպ վարդապետի (Այդ տա-
ռներ հնարողի) աշակերտներից շատերին, ո-
րոնք մնացել էին Արցախում նրա մեռնելուց
յետոյ: Գերիների թւում լինում է և մի մե-
ծազգի կին՝ Մագուհի անունով: Զօրապետը,
հաւանելով նրա գեղեցկութիւնը, հրամայում
է պահել իրան կնացնելու համար: Մագու-
հին չի համաձայնվում կռապաշտ զօրագլխի
կին գառնալ. վերջինս բարկանում է և կտոր
կտոր անել տալով նրան, հրամայում է ցըր-
վել դաշտի երեսին: Գիշերը Մագուհու մար-
մնի կտորների և արեան կաթիլների վրայ
ցոլանում են լոյսեր և այդ բանը զարմացնում
է անօրէններին: Արգնում են այդտեղ և-

թամանութիւններով շուռ էր գալիս իմ մօրի մէջ նոյն ժամանակ, երբ իմ ձին մեծ տանջանքներով առաջ էր տանում ինձ։

---

դած գերի հայ քահանաներից, որոնք քարոզում են նրանց քրիստոնէութիւնը։ Օ. օրապետը իր երկու որդոց և զօրականների հետ ընդունում է քրիստոնէութիւն և բոլորը մկրտվում են գետի ջրերին։ Յաղթական մարմնի կառները հասնում են մի բլրի վրայ, որ կոչվում է Նաղարլու։ Նոնաց Թագաւորը հրամայում է հանգստանալ զօրապետին և նրան հետևողներին։ Օ. օրապետ Մովսէս և Նրանոս որդիքը զօրականների հետ հաճախական են գառնում, մինչև որ Թագաւորի զօրքերը հասնում են և սարի գլխին կառը կառը անելով, փայտի պէս դիզում են ու այրում։ Սարը դրանից ընդունում է Գիզափայտ անուն։ Ուրիշ աղբիւրներից իմանում ենք, որ Գիզափայտից է ընդունել իր անունը և այն գաւառը, որ կոչվում է Տիզակ։

Ըրքան բարձրանում էինք դէպի վեր, այնքան օդի ցրտութիւնը պակաս էր դառնում։ Կարծես այս տեղերում դեռ նոր է ավարել ապրիլ ամիսը։ Թարմ նորահաս խոտի մէջ ուրեմն դեղին խոշոր ծաղիկներ կան, որոնք պատերով զարխմայրերը, միացնելով իրանց դեղին գոյնը ընդհանուր կանաչ գոյնի հետ, արեգակի մեղմ, թոյլ ճառագայթների տակ ներկայացնում են այնպիսի տեսարան, որին արժէ նայել։ Եւ օդի լուսիները վըռովում է ուխտաւորների ձայնից միայն. ուրիշ մարդկութիւնից Թաւուր ժամանակը ուրբ՛ան ահաւոր պիտի լինեն այս մշտալուռ բարձրութիւնները, որոնց վրայ չի ապրում ոչ մի կենդանի՝ ձայն արձակելու ընդունակութիւն ունեցող արարած։ Մարդու սիրտը ճնշուած է լինում բնութեան վեհութեան տակ. նա անզօրար բարախում է, արտայայտելով մի կատարեալ յուսահատու-

բերն. ախր ինչ պիտի վերջանայ այս
ձանապարհը, երբ պիտի հասնիմ գաղթին
Մի և նոյն ժամանակ միտքս տա-
պարտուած զինուորներուն տխուր տե-
սարանները կ՚անցնէին աչքերուս առջե-
ւէն։ Ամէն վերի լսած կ՚ըլլայի, որ
նոյն իսկ ինծի համար նշանակութիւն
ունէին և ոչ մէկ բան կրնար զիս
անտարբեր թողուլ։ Ամէն քայլ
անհագ արագութեամբ կ՚երթար վե-
րին, անցնում է ձանապարհի միջով և
պատում է դէպի ցած . . . Քանի մար-
դոց կեանք այդ րոպէին կախուած էր մի
մազից, սարսափելի է մտածել այդ մասին
Այնտանկնայնէս անցնում է սարսափե-
լի տեսիլներ և ամբողջ խեղդուելիս դէպ
դէպի ասաչ է գլխում։

Բայց այս վերջապէս մեռ է գաղա-
թի մեր ձիաները վերջնականապէս կանգ-
նում են Մենք իջնում ենք և մեզանից
սարսափելիներ բոլոր ոտքի վրայ են
ասոյն վերջապէս գնացին Տասնը այն

տեղը, ար սովորաբար իջնում է ուխտաւորների մեծ մասը, դա գոգաւոր մի հարմարաւոր ցած բաժին է։ Այստեղից մինչև ամենից բարձր գագաթը հասնելու համար պէտք է գնալ մի որ ծայր ձնառաշտով, լցուած բարիւր անհամար մեծ կաղնիներով։

Ես մոռացայ ասել, որ Վիրափայրի սարը ներկայացնում է մի բաւական երկար և սառնձոակի կերպով գասաւորուած բարձրութիւն։ Մինչև ծայրերը սարը շատ բաժանուածներ, կամ կոլիճակի ձիւղեր կան այնտեղ, մեկ բարձ մասը բաժանում է մի քանի գագաթների, որոնք կազմուած են աշտարի միապատոյ ծայրերից, այս պատճառով էլ գագաթները ոչ նոյն չափ բարձրութիւն։ Ամենից բարձրը գագաթի վրայ գտնում է ուխտատեղին, կամ, ինչպէս ասում են գիւղացիք, «սուրբ»-ը։ Սրանք բարձրացանք մինչև

այդտեղ: Մի աղքատիկ փոքրիկ շինուածք է դա, որ ունի եկեղեցու նմանութիւն: Ներս դռան մօտ և շուրջը ասեղ գցելու տեղ չը կար: Մարդկանց մեծ բազմութիւնը խիտ առ խիտ սեղմված էր այդտեղ և ամեն մէկը աշխատում էր շուտով նեղս մտնել: Մինչև մտնելու մի հնար գըտնելը նա ականատես եղայ մի բանի, որի մասին լռել չեմ կարելի: Մի թրքուհի զգուշութեամբ դուրս էր տալիս մի մեծ քարի տակից սև հող: Երբ հարցրի, թէ ինչ է անում նա, ասացին, որ դա գուշակութիւն է, թէ ինչ տեսակ զաւակ պիտի ծնէ նա: Եթէ գարի դուրս գայ սև հողի հետ, պիտի աղջիկ ծնէ, իսկ եթէ ցորեան—տղայ: Այս սնապաշտութիւնը հիմնված է այն աւանդութեան վրայ, որ այդտեղ նահատակված սուրբերը այրված են եղել կռապաշտ թագաւորի հրամանով ցորենի և գարու դէզերի մէջ. այդ ժամանակից է մնացել քարի տակ

ցորենն ու գարին, որով այժմ անապաշտ կանայք դուշակում են իրանց բախտը: Իհարկէ, մի քանի հարիւր տարուայ [1]) ընթացքում ոչ մի տեսակ ցորեան կամ գարի չի կարող մնալ, բայց այդտեղի միակ բնակիչը — մուղդուսին ամեն վարդավառի խաոնում է գարի և ցորեն հողի հետ: Ես խաւարը այնքան թանձր է, որ այսքանը հասկանալ չի լինում, այլ ընդունում եմ իբրև երկնքի պատգամ: Ես չը կարողացայ իմանալ, թէ հետաքրքիր թրքուհին ինչ տեսակ զաւակ պիտի ծնէ, որովհետև քանի որ նա զգուշութեամբ կատարում էր իր գործը, ամբոխի մի յորձանք հրեց մեզ դէպի շինութեան մուտքը:

Ներս մտանք: Փոքրիկ շինութիւնը հազիւ կարող է քսան մարդ տեղաւորել իր մէջ, բայց դրա երկու չափ կային այն-

1) Յայտնաւորքի պատմութեան նայած տուրքերը նահատակվել են V դարում:

տեղ։«Ցաճար»-ի պատերը, չը նայած, որ նոր են շինուած, բոլորովին սևացած էին. Թանձր ծուխը լցել էր նրա ներսը։ Առաջ գնացինք։ Ահա այն հռչակաւոր տեղը, որին երկրպագելու համար այսքան նեղութիւններով գալ յանձն առած էր այդ բազմաթիւ ամբոխը։ Դա մի բոլորովին մերկ բեմ էր, որ գետնից մի արշինից աւել բարձրութիւն չունի. նրա վրայ ոչինչ պարզ չը կայ։ Բայց նա ամբողջապէս ծածկված է վառած մոմերի անթիւ քանակութեամբ. այդ Թանձր ծուխն էլ նրանցից էր բարձրացած։ Բեմի առաջ ջերմաջերմ աղօթքներ էին կարդում հայուհիները. նրանց հետ կային և բաւական թրքուհիներ։Մահմետականը քրիստոնէից չետ չի մնալ այդ նուիրական տեղը պաշտելում։

Մենք էլ ամենայն խոնարհութեամբ մտանք բեմին, համբուրեցինք, և մի մի պայդ չը վառած մոմ դրինք այնտեղ

ու յետ կանգնեցինք:

Գանձանակի [1]) վրայ հսկում էր մեզ ծանօթ տէր Մեսրոպ քահանան, որ յաւուկ դրա համար եկած էր Հաղբատի գիւղից: Նա ի միջի այլոց պատմեց, որ յայտնի չէ, թէ որտեղ են գտնվում նահատակների գերեզմանները, իսկ «տաճար»-ը մի քանի տարի սրանից առաջ շինել է մի բարեպաշտ տիկին: Ուրեմն պէտք է ենթադրել, որ նահատակների նշխարների տեղը հին ժամանակներից մինչև այսօր պահում են այդ ժայռի գլխին ժողովրդի աւանդութիւնները միայն: Ուրիշ մի յիշատակ կամ վկայ չը կայ դրան վերաստուգելու համար:

Ուխտաւորների թիւը հետզհետէ շատանում էր. մարդկային արտաշնչութիւն-

1) Գանձանակը հանում է Հ. ուշիի հոգևոր դպրանոցին: Յանկալի կլինէր իմանալ, թէ որքան է հաւաքվում:

ներով լցուած օդը խեղդում էր. մենք շտապեցինք դուրս գնալ: Բարձրացանք «տաձար»-ի դառնը կանգնած ժայռի գլուխը. դա ամենաբարձր կէտն է ամբողջ այս սարի գլխին: Եւ այդ րոպէին, կարծես, դիւթական գաւազանի շարժմամբ հօրիզօնը ահռելի չափերով լայնացաւ մեր առաջին, բայց անելով մի անհասանելի լայնատարած տեսարան, որի մէջ ընկած էին գանձակի նահանգի հարաւային զանազան մասերը: Հեռու, դէպի հարաւ, դեղնած ու այրված պաշտաւայրով հոսում էր «մայր Արաքս»-ը . . . Անհամար փոքր ու մեծ սարերը, կարելով զանազան ուղղութեամբ հովիտներըը, միացնելով իրանց տեսքերը միմեանց հետ, կազմում են գեղեցիկ տեսարաններ: Լեռնային քամին այնքան սուր և ներս թափանցող էր, որ հարկաւրված էի հագնել ձմեռնային հաստ վերարկու:

Երկար ես չէի կարողանում դարձնել

աչքերս այդ գեղեցիկ տեսարաններից, թէև ընկերներս թախանձում էին իջնել մի քիչ ցած և ձաշել: Ես այդ ժամանակ մատամբ հասկանում էի այն պատճառը, թէ ինչու. մարդիկ այնքան սիրում են լինել լեռնային բարձրաթիւնների գլխին, ներթարկվելով վտանգների: Իրաւ, մի վտմ և վերին ասպիճանի բանաստեղծական բան է ներկայացնում այն շրջանը, որի մէջ ընկնում էք դուք, լինելով բարձր սարերի գլխին: Ամեն ինչը ներշնչում է ձեր մէջ մի ապրեցութիւն, որ աւելի խոնարհեցնում է ձեր միտքն ու հոգին երկրի Ստեղծողի առջև: Հովիտների և ձորերի մէջ ձեր սահմանափակուած հայեացքը, միտքը այստեղ աւելն և աւելն լայնանում է. դուք բոլորովին մտաւորապես յափշտակվում էք պատկան տեսակ պատմութիւնների տակ, չէք իմանում ինչին աւելն երկար մտիկ տալ, որ բանը աւելի շատ գնահել: Ժամանակը

անցնում է սարսափելի արագութեամբ և դուք միայն ափսոսում էք, որ միջոց չէք ունենալ աւելի երկար և հանգիստ կերպով ամեն բանը տեսնելու և դիտելու համար: Նայում էք դէպի մի կողմն—մի տեսակ տպաւորութիւն են գործում լեռնային գօհիներն ու անդունդները. այդտեղ բնութիւնն է միայն գործում մարդի վրայ: Նայում էք դէպի միւս կողմը—այդտեղ բոլորովին տարբեր բան, մի տեղ երևում է Տոլայ սարի այն գագաթը, ուր ցրված է մեռեալ բերդը. միւս տեղ երևում է «ալևոր Արաքս»-ը. և դրանք զարմեցնում են ձեր մէջ հազար ու մի մտքեր անցեալի մասին, մտքեր, որոնց լոպէի ծնունդ պէտք է համարել, որովհետև մեր այժմեան խաղաղ ու հանգիստ կեանքումմենք չէինք կարող հասկացողութիւն կազմել տխուր անցեալի մասին, եթէ չը լինէինք նրա վկաներն մօտ: Այդ վկաները այժմ էլ հաստատումեն, որ հայ

ժողովրդի վրայ հասել է մի մեծ դժբուխիւն հիւսիսի վհշ արծուի թևերի տակ. գտարել են քաղաքական թշուառութիւնները, մարդիկ հանգիստ և անդորրութիւն են վայելում, բայց ափսո՛ս, որ մինչև այդ ժամանակ հասնելը հայերից մնացել է մի բուռը միայն. մեծամասնութիւնը «դժբուխիւն» դոչելով էլ անհետացել է աշխարհի երեսից:

Ա՛յնքան զբաղուած էր իմ հոգին այդպիսի յիշողութիւններով, որ ընկերներիս դէպի ինձ ուղղած շատ հարցեր մնում էին առանց պատասխանի իմ կողմից: Ա՛յո՛, միայն հոգին է, որ գործում է այդպիսի դէպքերում. մնացած զգայարանքները ձնշուած, յափշտակուած էին, կարծես մէկը խլել էր դրանց ինձանից:

Ա՛յնտեղ, ուր մենք կանգնած ենք, ամեհի միապաղաղ ժայռի մի սալ է. նրա մակերևոյթը ձորեռուտած է, մեծ մեծ քարեր դուրս թռած ընկած են այնտեղ. և-

=ատաս մեր քարոզութեան պատճառ ոմն հասարակ
ճանաչուս վասն Ա. խնդրոյ մեր ։ մեք ի Կիպրոս
=ուս ձգեցաք մի՛ Ա ։ գնացեալ վարիր ի Կո
=ղոսացիս ։ ուր ոչ ոք ի Կիպրոսեցեաց ընդ
դիմացեալ էր մեզ ։ այլ ամենայն ինչ խաղաղա
=կան ։ ուր ի Կիպրոս ի Կղեմայ ։ ի Կղեմայ
ի Կիպրոս ։ ի Կիպրոսէ ի Կղեմա ։ ի Կղեմա
=ուս

պիտի կը գտանայ աւանդապետն և իրեն
մի աս իր ձշմարտութիւն կանչէ արդեօք
յարգի։

Երբ մենք ձնշում է էինք նեղէն թա-
ղարեան վրայ, ժամի 1 էր, և այս մի-
ջոցին գեռ չէր գտարուել ախտաղնեի-
գաւառ, ասկէ գիշերց կիսուած էր բաղա-
քին, որ անգամա շարժուած էր գէպի
վեր, նոյնպէս խնձոր գալիս էին և ան-
գամ մարդ ժայռերէ ասկ, փոքրիկ սր-
տասրտած հրաշագործներէ վրայ, որոնց էս-
տեղ կ՚ընդունին անոնք իբր սուրբ, ու
շնորհ է նոյն և միշտ խնդում է պիտի։

Արքեպիսկոպոսն այդպէս յաւ ցաւ էր
ձեռք ձեռնոցին վիրաւորուն էր չէր կար-
գադրած ընդհանրապէս ամեն բանը և ես
գան, կոչուած էր, էլ և այսօր շարժուածէր
ժողովրդեան վրայ ինդիրներ ընելու վրայ
և ի վեր չէ տարօրինակ ամենայն, ո-

լոնք սկսել էին սառչել: Ուղևորվելցանք կըր-
կին դէպի «տաճար»-ը: Սխալուած չեմ
լինել, եթէ ասեմ, որ ուխտաւորների թիւը
առաւօտեանից երկու անգամ շատացել էր:
Անցնել դժուար էր. իւրաքանչիւր քարի
վրայ, իւրաքանչիւր մի շատ կամ քիչ յար-
մար տեղ թափուած էին մարդիկ. սպիտակ
քարերը կատարելապէս սևացած էին բազ-
մութիւնից: Բոլորն էլ ուրախանում էին:
Ամեն մէկը մոռացել էր իր վիշտը, դառ-
նութիւնը և քաղցր քաղցր խօսելով, կամ
պարելով գուռնայի ականջներ խլացնող
ձայնի տակ, օդը լցնում էր ուրախ ա-
ղաղակներով:

Գողգոթայի մէջ տիրում է մի համոզ-
մունք—սուրբի տակ ուրախ լինել, քէֆ
անել և ամեն մէկը աշխատում է իրագոր-
ծել այդ համոզմունքը լայն չափերով: Ու-
նևորի համար այդ բանը մեծ դժուարու-
թիւն չի պահանջում. պէտք է միայն գան-

կալ: Խօսենք աղքատների մասին:

Ջազմաթիւ դէպքերի ականատես եղած եմ, երբ աղքատը տօն օրերին սուրբից չընկնելու համար գրաւ է դնում իր վերջին անհրաժեշտ բաները, փող է առնում և իր սրտի բաղձանքը կատարում: Սուրբ գնալու համար առնուազը պիտի մըսլսէ նա եօթը րուբլի, եթէ ունի պինդ ոտեր, ձիու կամ այլ անասունի օգնութեանը չապաւինելու համար: Նա էլ պիտի մի լաւ քէֆ անէ սուրբի տակ, հասկանալով քէֆը աղքատի լեզուով.—ընտանիքը այդ օրերը մի քիչ լաւ է անց կացնում: Բայց որքա՜ն թանկ է նստում այդ ուրախութիւնը, որքա՜ն վատ է լինում հետևանքը: Աղքատը վերադառնում է տուն, սկսվում է առ ժամանակ ընդհատուած գառն աշխատանքը մի կտոր հացի համար, ոչինչ չի՛տ գցել չի կարողանում: Գրաւ դրած կաթսան մնում է վաշխառուի խոհանոցը

իրեւ անժխտելի սեփականութիւն, իսկ ժամանակով հակայական հասակ առած ոտքը ձմեռամ է խեղճի շունչը։ Ա.յսպէս անհնարելի անցնում է տարին և ահա նորից պէտք է մոռանալ ասլբ գնալու մասին։ Կրկնվում է նոյն պատմութիւնը, ասլայնելով ազքատի պարտքի վրայ մի քանի րուբլի պարտք ևս իր հրեշաւոր տոկոսներով. խեղճը տալիս է, տալիս և շատ անգամ էլ պարտական մնում։ Իսկ նրանից յետոյ պարտական են մնում նրա ժառանգները, որոնք կարեցած չափ շարունակում են հատուցանել «հոգու ասլբ պարտքը»։ Ա.յսպիսի դէպքեր մի քանիսը տեսած եմ։ Եթէ միշտ այսպիսի հետևանք չե ունենում պարտքով ուխտագնացութիւնը, գոնե նա միշտ ծանր լուծի պէս ընկնում է ազքատի վրայ, ասլրի գառնայնելով նրա դրութիւնը, ասլրի դժուարացնելով հացի խնդիրը։ Փորձիր ազքատին

հասկացնել, որ նրա ջերմ կրծնական զգացմունքը այս աւրերի վերաբերմամբ ընդունած կը լինի նահատակների և Աստուծոյ առաջ և այն ժամանակ, երբ նա իր բնակութեան տեղը մի տաք տօթք կանէ և երկու մամ կը վատէ,—նա չի հասկանալ, նա կասէ ու կասէ, որ անպատճառ պիտի լինի այստեղ, մանաւանդ անձամբ այս ուրախութիւններին, համբուրէ իր սեփական բերանով աւրերի գերեզմանը:

«Տաճար»-ի դռներին մօտ այս անգամ էլ հաւաքուած էր ահագին ամբոխը. մարդիկ հրում էին, սեղմում էին միմեանց. Մենք կարողացանք մտնել ամբոխի մէջ ոչ առանց դժուարութեան. դիւզացիք առհասարակ յարգանքով են վերաբերում դէպի քաղաքացիք և ճանապարհ էին տալիս մեզ: Այստեղ ականատես եղանք մի տեսարանի, որ աւելի քան դայրացրեց մեզ: Երկու կանայք ուշաթափ ընկած էին դրա-

ներլի մօտ. դրանք էին «սուրբի դուլերը», նուագած կանայք, որոնց հետ, տգէտ ամբոխի համոզմամբ, այդ րոպէին խօսում էր սուրբը: Նրանք փետուր էին իրանց մազերը, ձեռները խփում էին քարերին և կցկտուր ձայնով պատգամներ էին խօսում նրանց մօտ հաւաքուած մարդկանց: Ընկերներից մէկը մի կոշտ խօսք ասաց նրանցից մէկի վերաբերմամբ. նա սթափվեցաւ և կոպիտ բանակռիւ սկսեց նրա հետ: Իսկ միւսը դեռ խօսում էր: Նա ասում էր. «աղան հրամայում է ինձ դռնէ դուռը ողորմութիւն հաւաքել, ասում է աչքըդ պիտի հանեմ, պիտի եօթը շէն մանգաս, ողորմութիւն հաւաքես»: Ցետոյ իր դէմքի վրայ գործում էր ծամածռութիւններ, կարծես ծանր էր նրա համար այդ պապիծը և ազաչում է ազատել իրան պատժից: Եւ յետոյ, կարծես լաց լինելով, ասում էր. «ասում է չէ՛, հաւաքի՛ր...ողոր-

մութիւն հաւաքի՛ր»: Եւ նա կը կատարէ այդ....Ներան լսում է մի մեծ ամբոխ, որ էգուց պիտի պատմէ բոլոր գիւղերում այդ պատգամախօսութիւնը: Եւ էգուց, երբ գիւղերի մէջ կը յայտնուի մուրացկանի պարկը շալակած կինը, իւրաքանչիւր ոք կը շտապէ առատօրէն տուրք տալ, կատարելով տուրքի կամքը...

Զոհանգաւուր է այդպիսի դէպքերում մի բան խօսելը. և իմ ընկերը, որի խօսքից սթափվել էր մի նուաղածը, անսահմանութիւնների ենթակայ պիտի լինէր ամբոխի կողմից, եթէ մի քանիները չաշխատէին հանգստացնել յուզուած մտքերը: Այդ կնոջ դէմքին ես չը կարողացայ նայել, այնքան լերբ և անամօթ էր նրա արտայայտութիւնը: Ինձ պատմեցին, որ այդ կինը թաղլարի մէջ յայտնի «չոփչի»ն է: Երկու խօսք «չոփչի»-ի մասին:

Փոքրիկ մանուկները, երբ միրգ են ուտում, ինչպես ասում են, շատ անգամ կորիզները մնում են նրանց կոկորդներում, որից և հիւանդանում են։ Այդ ցաւը բժըշկելու համար պատրաստ է «չոփչի»-ն, որ համարեա միշտ կնիկ է լինում։ Դնելով հիւանդ մանուկը ծնկների վրայ, չոփչին բերանը դնում է նրա քթածակերին և որքան ոյժում կայ փչում է. այդ ժամանակ բերանից որպէս թէ դուրս է թռչում կոկորդի մէջ մնացած կորիզը, կամ «չոփ»-ը։ Չոփչիութիւնը սովորելու կարելի արհեստ չէ. նրան բաժանում են սուրբերը իրանց սիրելիներին. և որի արհեստը «տուվի» (սուրբից տուած) չէ, այնպիսին կլինեն-նեը չի ունենում։ Չոփչիները նոյնպէս կերկրքում են հասարակ դասը. նրանք բոլորն էլ հարուստ են լինում։ Ամեն տարի չոփչիները պարտաւորուած պիտի ուշաթափ լինեն սրբերի տակ, իհարկէ, իրանց վար-

կը ամուր պահելու համար: Կախարդութեան ձև ստացած բժշկականութեան այս իր տեսակի առանձին ձիւղը խիստ անխախտ հիմունքների վրայ է գտնվում և նրա շահաւէտութեանը առ այժմ ոչինչ վտանգ չի սպառնում:

Մի և նոյն ժամանակ, երբ ուշաթափ կինը կարդում էր իր պատգամախօսութիւնը, «տաճար»-ի մէջ դրսից երևում էր և մի ուրիշ տեսարան. մի քանի կանայք, ընդունելով մուղդուսուց փոքրիկ քարեր, գնում էին իրանց վրերին և չոքէչոք պտոյտ էին գալիս տաճարի միջով, պատերի տակով: Դրանք չքնաղ կանայք էին, այդ քարերը պիտի լուծէին նրանց ամուլութիւնը:

Չհեռանալով այդ տեսարաններից, ես կրկին բարձրացայ ժայռի գլուխը և լուռ մտախոհութեան մէջ անձնատուր եղայ բնութեան տեսարանների դիտողութեանը: Ին-

հետ նստածներից մեկը ցոյց տուեց մեր առաջին մի սար, որ գտնվում է Տումի կուչուած գիւղից վերև. այդ սարի գլխին, նրա ասութեամբ, գտնվում են հին աւերակները, նոյնպէս և «գակի» թագաւորի գերեզմանը: Հարց ու փորձից յայտնվեցաւ, որ դա ճիշտ է և ամենքն ասում էին, որ «գակի» թագաւորի գերեզմանը այնտեղ է: Ուրքան և մեծ էր իմ ցանկութիւնը տեսնել և այդ տեղը, այնուամենայնիւ ստիպուած էի հեռանալ այդ մտքից, որովհետև բոլորովին ժամ չը կար այնտեղ հասնելու. դիշերը վրայ էր հասել, իսկ էգուց առաւօտեան, լուսաբացին, այս բոլոր մարդիկ պիտի թողնեն այս տեղերը և գաճ իջնեն: Այնպէս էլ մնացի առանց որ և է տեղեկութեան այդ գակիկի մասին: Հետևեալ օրը, տեսնվելով Հ. Կոստանդեանցի հետ, խօսեցի այս մասին. նա ասաց, որ իրան էլ յայտնի են այդ գերեզմանն ու

աւերակները, աւելացրեց և այն, որ դի-տաւորութիւն ունի գնալ այնտեղ և հաւաքել բոլոր կարելի եղած տեղեկութիւնները:

Արեգակը մայր մտնելու վրայ քամին դիզափայտի վրայ աւելի ուժգնացաւ: Օդն այնքան ցուրտ էր, որ հարկադրված էինք բոլորովին փաթաթվել վերարկուների և վերմակների մէջ. բայց այդ էլ չօգնեց: Քամին այնքան սուր և թափանցող էր, որ բաւական էր նրա մի դիպչելը մարմնի մի բաց տեղին և ամբողջ մարմինը դողում էր . . . Քարէ մեծ ժայռերն էլ չէին կարողանում պաշտպանել մեզ ցրտից, քամին ամեն տեղ հասնում էր: Մի քիչ փափուկ ապրած մարդու համար ցուրտը հանդուրժել անտանելի էր. դուցէ անտանելի էր և գիւղացի ուխտաւորների համար, սակայն նրանք ոչ մի նշան, որով կարելի լիներ իմանալ ցրտի ներ-

գործոց թևան չափը: Ընդհակառակը նրանք շարունակում էին իրանց ուրախութիւնները: Քամու շվվոցների, մռնչիւնների տակ մարդիկ դեռ պարում էին, թէպէտ և պուռնայի ձայնը քամին տանում էր շատ հեռու, այնպէս որ մօտիկում կանգնածին էլ լսելի չէր լինում: Ես միայն նախանձվում էի նրանց վրայ, աշխատելով աւելի պինդ ծածկվել շորերի տակ: Շուտով վրայ հասաւ մթութիւնը: Հարաւային կապոյտ երկինքը քողարկուեցաւ սև վարագոյրի տակ, որ ծածկեց մեր աչքերից ամեն ինչը: Թաւալն էլ արգելք չը կարողացաւ լինել մարդկանց ուրախութիւններին. դեռ շարունակվում էին աղաղակները: Կծկվելով մի տեղ, մեր շրջանի բոլոր ընկերներս ծածկվեցանք մի վերմակի տակ և պառկեցինք: Բայց ինչ պառկել . . . Հինգ հոգի թափուած էինք միմեանց վրայ, այնպէս որ ապատ շարժուելութիւնը անհնարին էր. պէտք

էր ընկնել անշարժ և այնքան համբերութիւն ունենալ, որ եթէ մի անգամից ընդարմանար անգամ, դարձեալ կարելի չէր շարժվել: Այնուամենայնիւ մենք ակամայ տանում էինք այդ տանջանքը, որովհետև դէթ գլանով քիչ տաքանում էինք: Եւ այսպիսի դրութեան մէջ պէտք էր քնէինք: Բայց չը նայած սաստիկ յոգնածութեանը, որ պահանջում էր հանգիստ և քուն, ես չը կարողացայ աչքս գոցել համարեա մինչև լուսաբացը: Կէս գիշերից մօտ մրրիկը աւելի կատաղեց և ընդհարվելով մեծ ժայռերին, ահռելի ձայներ էր արձակում: Այդ ժամանակն էլ լռեցին բոլոր մարդկային ձայները: Մի՞թէ ամենքն էլ քնել են մի այսպիսի սոսկալի ժամանակ: Առաւօտից մօտ մի թեթև նինջ տիրում է մեզ: Բայց քամու մի ոյժգին յարձակումը կըրկին զարթնացնում է ինձ: Առաւօտ է և ես շտապում եմ կանգնել, որպէս զի փու-

թով թողնեմ այդ անհիւրասէր բարձրու-
թիւնները։ Ներքևում, հովիտների վրայ,
դեռ տիրում էր խաւարը, իսկ այստեղից
արդէն կարելի է տեսնել արեգակի ծագելը։
Շիկացած երկաթէ գնտակի նման արդէն
լողում է նա դէպի բարձր, դեռ չը կա-
րողանալով արձակել ճառագայթները մեզ
վրայ։ Ընկերներս զարթնում են, ամեն մէկն
աշխատում է անշարժութիւնից փայտա-
ցած անդամները շփելով ու ծռմռելով կրր-
կին կենդանութեան հրաւիրել։ Բայց յու-
սը դեռ շարունակվում էր։ Ուխտաւորների
խմբերն արդէն ոտքի վրայ են և շտապում
են դէպի վեր, դէպի «աաձար»-ը՝ վերջին
անգամ ուխտ անելու համար։ Մենք իջ-
նում ենք դէպի ցած, ի հարկէ, ոտով,
գնում ենք ուղղաթեք զառիվայրերով հա-
մարեա վազելով և այդ բնական շար-
ժումը մի քիչ տաքացնում է մեր արիւնը։
Քամին մեզ թողեց սարի ստորոտում. այդ-

տեղ օդը տաք էր, հարկաւորութիւն չը կար փաթաթվելու ձմեռնային վերարկուի մէջ: Շուտով մենք քօշի-աղբիւրի մօտն էինք, լուացվեցանք ձիւնի պէս սառը ջրով, հեծանք ձիաները ու ճանապարհ ընկանք:

Պռաացայ յիշել, որ Դիզափայտի սարը միայն մի աղբիւր չէ տալիս. քօշի աղբիւրից քիչ դէպի արևմուտք մի ուրիշ ձորի մէջ հոսում է և մի այլ աղբիւր, որ կոչվում է Արջի աղբիւր: Դրա հետ կապված է մի աւանդութիւն, որի մասին խօսել աւելորդ չէր լինել:

Ասում են, որ հին ժամանակները մի արջ, դուրս գալով ցուժի գիւղի ծմակներից, սկսում է բարձրանալ դէպի Դիզափայտ: Հասնելով այն տեղին, ուր այժմ գտնվում է աղբիւրը, արջը սաստիկ ծարաւում է, այնպէս որ ուժաթափ ընկնում է, սկսում է լիզել գետինը ու ապուռալի կերպով բա-

ռաչել դէպի երկինք:

Երկինքը խուլ չէ ճնուշ արջի վերա-
մամբ: Իսկոյն գետնից բղխում է այդ ալ-
բիւրը, արջը խմում է գովարար հեղուկը
և շարունակում է իր գնաց քը դէպի վերև:
Այրուել ձակատագիրը խիստ անգութ է
դառնում դէպի արջը: Հասնելով ժայռա-
յին մասի ստորոտին, նա կայծակնահար է
լինում, տեղն ու տեղը սատկում: Մինչև
այսօր էլ ցոյց են տալիս նրա տեղը. դա
մի փոքրիկ քարախառն հովակոյտ է «տա-
ճար»-ից ցած:

Տեսնելով այդ հրաշքով ստեղծուած
աղբիւրը, ես յիշում եմ գոհչի վանահայր
Առաքել վարդապետի մի ուրիշ պատմու-
թիւնը այնտեղ գտնվող մի քաղցրահամ
աղբրի մասին: Հայր սուրբն ասում էր, որ
երբ ինքը նոր վանահայրի պաշտօնով ե-
կել էր գոհչ, բոլորովին ջուր չը կար նրա
մօտիկ շրջակայքում. ջուրը բերում էին

շատ ներքև էր։ Մի անգամ երազում երևում է վանքի հիմնադիրը՝ Վրթանէս եպիսկոպոսը և յայտնում է, որ այն ինչ տեղը ջուր կայ։ Մեռս օրը վանահայրը իր մարդկերանց հետ գնում է ցոյց տուած տեղը և հէնց որ պիտչում է մատով գետնին—ո աքանչելացս—իսկոյն բղխում է աղբիւրը, որ մինչև այժմ էլ գոյութիւն ունի։ Ուրիշ ի լուր են ասում, թէ մեր ժամանակները հրաշքներ չեն լինում..... Եւ վանավահայր վարպապետը պատմում էր այդ անկեղծօրէն, համոզուած լինելով, որ մենք մազի չափ կասկած չունենք նրա երազի մասին։

## Զ.

### ԶԿՈՒԱՏԱՓ։ ՕԽՏԸ-ԴՈՆԻ։

Քոշի տղերի մօտից ուխտաւորները բաժանվում են. իւրաքանչիւր գիւղի ժողովուրդ ուղևորվում է դէպի իր կողմը, տանելով իր հետ բազմաթիւ ոչխարներ, որ գնել էին վերևում, սուրբի մօտ։ Դեռ եւս չէկ ես տեսել էի այնտեղ մեծ մեծ հօտեր, որոնք իմ աչքի առջև հալվեցան, վերջացան։ Ես արդէն գիտէի, թէ ո՞ւր են տանում ոչխարները, ինչո՞ւ չը մորթեցին սուրբի մօտ, սարի գլխին։ Պատճառը շատ հասկանալի էր։ Ամբողջ սարի վրայ ոչ մի կաթիլ ջուր կայ, ոչ մի կտոր փայտ։ Բացի դրանից ի՞նչպէս շարժվել այնտեղ։

Ուխտաւորների մէջ սովորութիւն է

դարձել մատաղները տանել Դիզափայտից քիչ կամ շատ հեռու և նշանակուած տեղերը մորթոտել: Թաղլարեցուց ընտրած տեղն է Ջկռատափ անունով մի անտառապատ տեղ, ուր կայ և ջուր: Երբ մենք մօտացանք այդ տեղին, ծառերից կախած էին մաշկած ոչխարներ, իսկ նրանց մօտ այրվում էին խարոյկները: Սոխպուած էինք շնորհակալութեամբ վերժել շատերի հիւրասիրութիւնը և մնալ մեր այն խմբի մէջ, որի հետ գնացել էինք Դիզափայտ: Այդ խումբը բաւական սուաղ էր: Շուտով ամեն տեղ «սուփրայ բացին»: Մարդիկ նըստած էին դալար խոտերի մէջ, կազմելով մեծ շրջաններ: Ականջին շամփուրներով խորոված միսը կուտում էին մէջ տեղ և ամեն մէկը վայելում էր առատութեամբ... Բերվում էին և շամփուրներ, որոնց վրայ բացառապէս խորոված էին ոչխարի գմակներ: Որքան մեծ զմայլմամբ ուտում էին

գիւղացիք ձորակի մէջ կոտրեցին, միջոցներուն չը մոռնալով ոչխարհօտաներ ու կենացներ պարպակել մէջ ակռէրնց, որոնց կառավարելը յանձնուած է լինում սովորաբար երիտասարդներուն։ Ամէն տեղ ուրախութիւն էր տիրում, կարծես, այստեղ կառավարում էր մի մէջ խնճոյք։ Իսկ երբ բոլոր պաշարները կերած ու խմած էին, ամէնքը շտապեցին համեմատել իրանց գրաւոնները ու ձանապարհ ընկնել։

Համ բարեկամը յիշեցրեց երեկուայ խոստումն ուխտ գնալ Օխտը-գոնէին, որ այդ ճամբից շատ հեռու չէր։

Անդր գուրս եկանք մէջ ձանապարհից և նոսր արտերի միջով, ուղղ հակառակ ծառերի տակով գնալով հասանք մի բլրի, ուր և տեսանք Օխտը-գոնէին։ Դա մի շատ հին շինութիւն է՝ վերևից բաց։ Սղաղով նեղ մուտք մի փոքրիկ ծակով, որ դուռ ունի և ծառայում շինութեան

Նեթար ներկայացնում է Հօմէն կանոնաւոր կիսաբոլորակ խորանաձև բաժանմունքներ, որոնք բաժանում են միմեանցից պատերի օրինակի յատկութեամբ։ Հօմէն բաժանմունքներից էլ առաջել է իր անունը այդ ուխտաւորներն (Հօմէն գնացին)։ Հօմէն բաժանմունքներում այրում էին բազմաթիւ մոմեր։ (Այդպէս ուխտ գնացողը անպատճառ պիտի ունենայ Հօմէն մոմ)։ Պատերը բոլորովին ևւացած էին ծխից. մի տառ անգամ չէր կարողացել գրել նրանց վրայ։ Այդ կողմերի աւերակների և կանգուն եկեղեցիների այժմեան կենդանի բնակիչը և Տարեւանը — Առաքել վարդապետը առում էր, որ այնտեղ թաղուած են Հօմէն խոստաձարակները, որոնց ոսկորները մեր եկեղեցիս թէ որքան առաջ է այդ—չը գիտեմ։

Այս ուխտաւորներն գնում են մի անսովոր գեղեցիկ տեղ։ Նա շրջապատուած

է անտառով, որ այնքան գեղեցիկ է, որ չես հաւատում, թէ դա մի արհեստական ծառաստան չէ, այլ քմահաճ բնութեան մի սիրուն զարդ: Այգեպետ միշտ շուտաք է, միշտ զով քամին երջանկութիւն է պատճառում ուղեւորին, երբ սա նստում է այգեպետի քիչ մի հանգստանալու համար: Հեռու շրջակայքը ներկայացնում են խիստ հրապուրիչ տեսարաններ, ամեն տեղ բուսականութիւնը շլացնելու չափ հարուստ ու փարթամ է: Բնութեան ոչ մի զարդ, ոչ մի երեւոյթ չի պլանում հաղորդել այդ չքնաղ աշխունին այնքան վսեմ եւ յափշտակող պօէզիա, որի ազդեցութիւնից չի կարող ազատ մնալ սիրտը, ինչ տեսակ կազմուածք եւ ունենայ նա:

Մեծ ափսոսանքով էի հեռանում ես Օխտը-պոնից եւ հեռանում էի որպէս թէ մի պատկերից, որին որքան շատ եսնայում, այնքան էլ շատ գերում է նա քո սիր-

տըն ու հոգին: Ուրբաթ փափագելի էր ինձ մնալ այդտեղ գոնէ մի շաբաթ, ապրել այդ բնութեան մէջ, ծծել այդ մաքուր ու զեղեցիկ օդը: Բայց ժամ էր հրաժեշտ տալ և այդ տեղին: Դրանով վերջանում էր մեր ուխտագնացութիւնը...

Ազգային տպաւորութիւնների մի ամբողջ բեռն ընկած էր իմ հոգու վրայ. ես ամբողջապէս յափշտակուած էի մտածողութիւնների մէջ, այնպէս որ թողած ու տաք ձանապարհը ինձ համար աննկատելի կերպով անցաւ: Իրիկնապահին մենք Թալարի մօտ էինք. մի քիչ շըջեցինք այգիների մէջ և յետոյ մտանք գիւղը:

Գոլորովին չարփվածի պէս ես ընկայ անկողնի մէջ: Այդ բոլոր անց կացրածից յետոյ ինձ հարկաւոր էր հանգստութիւն և հանգստութիւն . . .

Երկու օրից յետոյ, յուլիսի 17-ին, ես արդէն Շուշիումն էի։—

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

Дозволено цензурою 27 декабря 1884 года
Г. Тифлисъ

# ՅԱԽԵԼՈՒԱԾ [1])

Երուշիի գաւառում, Տիգակի և Վարանդայի սահմանների վրայ, դէպի Ծաղկար և Տող տանող ճանապարհից վերև գտնվում է Երին-Ծաղավարդ հայաբնակ գիւղը։ Նա

1) Մեր այս գրքոյկը բոլորովին պատրաստ էր մամուլի տակ մտնելու, երբ սաացանք մի քանի տեղեկութիւններ էս, որոնք ունեն մօտիկ կապ մեր յիշատակարանի հետ, ուստի և յարմար դատեցինք աւելացնել այդ տեղեկութիւնները առանձին յօդուածով։ Փոյթ չէ, եթէ մեր աշխատութիւնը դրանով ղրկվում է կանոնաւոր դասաւորութիւնից. մենք առաջարկում ենք հում նիւթ, որից հետաքրքիր բանասէրը կարող կը լինի մշակել շատ թէ քիչ ուղիղ եզրակացութիւնները Արցախի և Աղուանից երկրի հին պատմական ժամանակներից։ Մի և նոյն ժամանակ շատ գոհ կը լինէնք, եթէ մեր այս գրքոյկը կարդալանաը ցոյց տալ մեր գիտնականներին, թէ մեր երկրում էլ կայ շատ ուսումնասիրելու բաներ։ Կանցնեն տարիներ և աւերիչ ժամանակի ամեն ինչ ոչնչացնող ժանիքներից ազատուած և մինչև մեր օրերը պահուած հնութիւնների

տեղաւորված է մի բաւական մեծ և բարձր լեռնային բարձրութեան վրայ, որ պատած է ծմակներով:

Այդ գիւղից դէպի հարաւ-արևմուտ, 1 ½ վերստ հեռաւորութեամբ գտնվում է մի աւանձնակի դասաւորված անտառապատ մեծ բլուր: Հ'անապարհը դէպի այդ բլուրը բաւական յարմար է. ուղևորը աստիճանաբար բարձրանում է ձիով անընդհատ ծմակի միջով:

Ա՛ց թէ եօթն ամիս սրանից առաջ այդ բլրի գլխին, հսկայական ծառերի մէջ երևում էր մի խաչաքար, որ Աղաղավարդ գիւղի հայերի ուխտատեղին էր. նա կոչվում է Նարևածառ: Այդտեղ ուխտ գնացողն ունի և այժմ կատարել մի սրբազան պարտականութիւն, որ աւանդաբար մնացել է ժողովրդի մէջ ամենահին ժամանակներից. տարած զո-

---

Մնայորդները զոլորովին կ'անհետանան, տանելով իրանց հետ յաւիտենականութեան անդունդները մէջ շատ հետաքրքիր բաներ:

հերից ինչ և ինայ աւելորդ՝ պէտք է թողել այնտեղ, իսկ յետ տանել մի բան անկարելի է և այդպէս չանողները խստիւ պատժվում են: Պատմում են, որ մօտիկ անցեալներում Թաղավարդեցի մի քանի գիւղականներ, մոռանալով նախնական սովորութիւնը, զոհ տարած ոչխարների աւելորդ մնացած դմակները յետ են տարել տուն. չի անցել և մի քանի օր՝ կարկուտը ոչնչացրել է նրանց արտերի մեծ մասը. այն ինչ միւս գիւղացիների արտերը անվնաս են մնացել: Ա՛ա է Նարևածաւի մի առանձնայատկութիւնը:

Պօտաւորապէս եօթն ամիս սրանից առաջ մի Թաղավարդեցի հայ կամենում է այդ խաչաքարի վրայ մատուռ կանգնացնել իր սեփական միջոցներով: Գիւղացիք քանդում են մատուռի համար հիմք, բայց փորած տեղից երևում են գետնի տակ ծածկված շինութեան պատերը: Փորողները զգուշութեամբ շարունակում են գործը. հետզհետէ երևան է գալիս մի եկեղեցի. այստեղ աշխատանքները ընդ-

հատկանշական են, թէ և արտաքին նշաններից երևում է, որ դեռ էլ շինութիւններ պիտի լինեն գետնի տակ։ Յայտնվում է, որ ուխտատեղ դառած խաչաքարը գետնի տակ ծածկված եկեղեցու վերին քարերից մէկն է եղել։

Եկեղեցին ներկայացնում է բազմադարեան մի շինութիւն, կառուցուած ամենանուրբ ճաշակով և գեղեցիկ ճարտարապետութեան կանոններով։ Նա գլուխ չունի, բայց սեղանի և խորաններին տեղերը բաւական լաւ են պահուել։ Խաչին ծառերի արմատները խրուած են պատերի մէջ. բուսականութեան կեանք տալով այժմ դարերի ընթացքում ճմլել է անշունչ եկեղեցու աւերակները, ուստի և շատ քարեր ճաքճաքած ու կոտրատված են։

Եկեղեցու շինութեան տարին դեռ չի յայտնվել, բայց նրա հնութեան մասին խօսում են երկու արձանագրութիւններ, որոնք գտնվում են երկու քաչաքարերի վրայ։ Կնում ենք այստեղ նրանց ճիշտ օրինակները.

«Սուրբ Պետրոս, կանգնեցի զեսաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց։ Արդ, որք երկրպագանէք սուրբ նշանիս զիս աղօթս . . . ջիք և Աստուած զձեզ յիշեսցէ, Թուին ՆԽՕ։ էր։

«Սուրբ Պօղոս։ Յամս Աստուածապատիւ և հոգևոր Տեառն Յովհաննիսի Արմաթասայ եպիսկոպոսի և պետութեան Տեառն Վասգիկայ Աղուանից իշխանաց իշխանի ես հայր Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս եղբօր որդի Կոկոնայ . . . .

Թուականը մի և նոյնն է։

Ուրեմն մեզ հինն հարիւր տարուայ հնութիւններ են դրանք։ Այժմ, կարծում ենք, հասկանալի է, թէ ինչ «Վասգի» Թագաւորի գերեզմանն է գտնվում մեր յիշատակարանում յիշած Տումի գիւղի սարի գագաթի վրայ, և այս արձանագրութիւնը աւելի մեծ նշանակութիւն է տալիս այն գերեզմանին, որով հետև, եթէ ընդունել, թէ նոյն Վասգիկն է այս արձանագրութեան մէջ յիշուածը, նա հինն

հարիւր տարուայ մի հնութիւն պիտի լինի։

Ընտեղ մեր առաջ երևան է գալիս մեր հին պատմութիւնը ուսումնասիրելու մի միջոց, դա ժողովրդի մէջ կենդանի մնացած աւանդութիւններն են։ Նոնն հարիւր տարի անցնում է մի երկրի վրայով, ինն հարիւր տեսակ փոխվում է աղգերի վիճակը, բայց երկրի բնիկների մէջ չի մեռնում մի անուն, ըերանացի ղրուցաբանութիւնների մէջ կենդանի է պահվում ժողովրդական հերոսը, նրա գերեզմանի տեղը։ Դա է եղել հայկական ժողովրդի մի ամենահին յատկութիւնը, որ կայ մինչև այսօր։ Մտէք գիւղական հասարակ դասի մէջ, խօսացրէք և դուք կը տեսնէք, որ հայը շատ անգամ ներկայի համար այնքան հասկացողութիւն չունի, որքան հին պատմական կեանքի մասին. հայրենիքի մէջ կատարուած անցքերը մտել են նրա աւանդութիւնների մէջ, ուր իսկականութիւնը թէև աղճատուած է, բայց գլխաւոր դէպքերը, փաստերը անհամեմատ պարզ և ճիշտ են մնացել։ Մինչ զա-

նազան առասպելներից և բերանացի աւանդութիւններից ու եգերից չէր հաւաքում պատմութեան փշրանքները հինգերորդ դարու մեր ուսումնական մեծն Խորենացին: Յաւալի ներհակութիւն: Տասն և չորս դար մեզանից առաջ հասկանում էին ժողովրդական բանաստեղծութեանց նշանակութիւնը, իսկ մեր օրերում թեթեւամտութեամբ են վերաբերվում դէպի աւանդութիւնները, ժողովրդի կենդանի ձայնը:

Մեր յիշած Խարևածառի հետ նոյնպէս շատ աւանդութիւններ կան կապուած, որոնցից կը յիշենք մի քանիսները: Ծաղավարդի ծերունիքը (իսկ այդ գիւղում հարիւրից աւել տարիներ տեսածներ շատ կան), ի թիւս որոց կը յիշեմ Գրիգոր քահանայ Գադեանցին, ասում են, որ Խարևածառը մի ժամանակ եղել է Ղուանից կաթուղիկոսութեան ամարանոցը: Այդ բանը շատ հաւանական է երևում, երբ աչքի առաջ ենք առնում այն, որ Ամարասը (Ղուանից կաթուղիկոսանիստ

հռչակաւոր վանքը) գտնվում է այդտեղից ոչ այնքան հեռու մի դաշտավայրի վրայ, ուր ամառը սարսափելի տաք է լինում. գիւղացիք շոքի սաստկութիւնը ցոյց տալու համար ասում են. «Ս. Մարտսայ դաշտից էլ անցաւ»: Եւ ահա ուղիղ այդ դաշտավայրի առաջ բարձրացած է այն լեռնային գօտին, որի մասն է կազմում լլուրը, ուր գտնվում է Խարևաձառը: Հացի դրանից միթէ վերև յիշած արձանագրութիւնը կողմնակի կերպով չի ակնարկում այդ ենթադրութեան վրայ: Յետոյ աւանդութիւնը ասում է, որ Խարևաձառի եկեղեցին կործանվել է Լանկ-Թամուրի սոսկալի արշաւանքի ժամանակ: Ընդհ է եղել այդ արշաւանքը և Ս. Մարտսայ հոյակապ վանքի համար. նա էլ կործանվել է բարբարոսների ձեռքով: Ժողովուրդը այսօր էլ պատմում է, թէ Լանկ-Թամուրը իր զօրքերը շարել է Ս. Մարտսից մինչև Ս. Բաքսը. վանքի մօտ կանգնած վիմագրները մի մի վերցրել են նրա քարերը և ձեռքից ձեռք

տալով՝ թափել են Ղրաքսի մէջ։ Կիսաւեր դըրութեան մէջ հռչակաւոր հնութիւնը մնացել էր մինչև վերջին ժամանակները, վանական թուականներին նորոգուել է նա եւ Ա. Լուսաւորչի Թոռան Գրիգորիսի գերեզմանը գտնվել է աւերակների տակից։

Այց ի՞նչպէս է եղել, որ Նարեաճառի եկեղեցին անյայտացել է գետնի մէջ։—Ուրիշ մի բանով չենք կարող հասկանալ այդ, եթէ չենթադրենք, որ խիտ ծմակի բուսականութիւնը ծածկել է եկեղեցին և դարերի ընթացքում յայտնի բնական և երկրաբանական օրէնքներով փտելով դարձել է հող, որով և ծածկվել է եկեղեցին, թողնելով ապագայի համար իբրև նշան և ուղեցոյց խաչաքարը, որ ժողովրդի ուխտավայրն է դարձել։

Ինչ վերաբերվում է Նարեաճառ անուան, այժմեան ծերերը պատմում են հետևեալը. մի ժամանակ այդտեղ բնակվում էր մի սուրբ և խստակեաց եպիսկոպոս. ամեն ժամանակ, երբ նա երկար ծոմապահութիւններից և ճգնութիւն-

ներից յետոյ պատարագ էր մատուցանում սուրբ սեղանի վրայ, ողջոյնի ժամանակ ծառների բոլոր ծառերը ողջունվում էին միմեանց հետ, երեք անգամ կպցնելով միմեանց իրանց գլուխները: Մի անգամ հեռու տեղից գալիս է մի ջերմեռանդ հայ այդ հրաշքը տեսնելու համար: Նա խոստանում է եպիսկոպոսին նուիրել վանքին իր հետ բերած մի ջորաբեռն ոսկին, եթէ միայն արժանանայ տեսնել հրաշքը: Եպիսկոպոսը խոստանում է, բայց պատարագի ժամանակ նրա մէջ ծագում է երկմտութիւն, թէ արդեօք ոսկու հետ ջորին էլ պէտք է նուիրուի, թէ ոչ. այդ երկմտութիւնը այն հետևանքն է ունենում, որ ողջոյնի ժամանակ ծառերը չեն համբուրվում միմեանց հետ: Երբ ուխտաւորը իմանում է եպիսկոպոսից պատճառը, շտապում է յայտնել, թէ ջորին էլ է տալիս և բացի դրանից խոստանում է յետ դառնալուց շատ ուրիշ թանկագին պարգևներ էլ ղրկել: Յետևեալ օրը եպիսկոպոսը կրկին սեղան է ելնում. հը-

րաշքը այս անգամ կատարվում է. Հարուստ հայը գոհունակեամբ գնում է իր երկիրը եւ դըրկում է խոստացած նուէրները: Այս աւանդութիւնը թէեւ մի առանձին հետաքրքրութիւն չի ներկայացնում իրրեւ մի զուտ պատմական փաստ, բայց վկայում է, որ Նարեւածառը յայտնի է եղել եւ հեռու տեղերում եւ ունեցել է մեծ հարստութիւններ, որոնցից հրապուրված բարբարոսները կործանել են նրան:

Ահա այն ամենը, ինչ այժմ յայտնի է Նարեւածառի մասին: Գուցէ յետագայումն յայտնվեն էլ ուրիշ արձանագրութիւններ եւ շինութիւններ, երբ սկսեն փորել եկեղեցու շրջակայքը. գիւղացիք մտադիր են շուտով սկսել փորել, եթէ արգելք չը լինի մեր հոգեւոր կառավարութեան կողմից:

Նարեւածառի եւ Ալաղավարդի մէջ գտնվում է մի ուրիշ բլրակ, ծածկված աղքատիկ բուսականութեամբ, այդտեղ կան պղընձէ հանքեր: Այդ բլուրից բղխում է մի

փոքրիկ գետակ, որ անուանվում է Կարմիր ջուր . իւրաքանչիւր դիւղացի գիտէ , որ այդ ջուրը վատառողջ է, որովհետև ունի իր մէջ հանքային բաղադրութիւններ. ուստի նրանից ոչ խմում են և ոչ անասուններին են տալիս: Նա հոսելով անցնում է դէպի Տող տանող ճանապարհի միջով, մի մեծ խոր ձորով, որ կոչվում է Ղուրաթանին-կապ: Երկրի այդ բնական առատ հարստութիւնը մինչև այժմ մնում է անմշակ. թէև անցեալներում մի շուշեցի հայ մեծ գումար է վատնել պըղնձէ հանքերը մշակելու համար, բայց գործը չի կարողացել վախճանին հասնել. ծնացել են մինչև այժմ խոր ականները և մի քանի գործիքներ . . . Նայը միշտ այդպէս է եղել: Ջերմեռանդութեամբ սկսել է մի գործ, իսկ կէսում թողել անկատար: Ու առհասարակ հայը իրրև տնտեսագէտ, իրրև երկիր մշակող, նրա հարստութիւնները արտահանող, շատ անկարող է. նա, ինչպէս համոզուած է բոլոր աշխարհը, առևտրի մարդ է, անքրտինք

և անարիւն աշխատանքի երկրպագուն է։ Ընդունենք թէ այդպէս է. բայց միթէ պիտի բաւականանանք միայն այդպիսի միտք ունենալով. միթէ չը պիտի ուզենանք իմանալ պատճառները, թէ ինչու այսօր հայը ապրելու միջոց է ընտրել առևտրականութիւնը, այն էլ այն տեսակ առևտրականութիւնը, որի սիստեման, որի նպատակները, հետևանքները ոչ մէկի համար հաւանելի չեն թուում։ Այդ պատճառները հեշտութեամբ կարող ենք հասկանալ, եթէ ուշի մտօք հետևենք հայ ազգի կրած կեանքին, նրան երկար դարերի ընթացքում շրջապատած քաղաքական հանգամանքներին։ Սակայն պատճառներն իմանալով դեռ ոչինչ բան արած չենք լինի ընդհանուր առևտրութեան առարկայ դառած մի պարապմունքի դէմ։ Այժմ, երբ ամեն հանգամանքներ նպաստաւոր են ժամանակակից պահանջների համեմատ առևտրականութիւն հաստատելու, այժմ, երբ ըոլոր աշխարհը կեանքի ապահովու-

Թեան աղբիւրը անխոնջ որոնում է ծմակների, ձորերի, սարերի մէջ, այո՛, այժմ մենք պէտք է միայն հարցնենք.- մի՞թէ չը կայ մէկը, որ կարողանայ առաջնորդել բազմութիւնը դէպի իր երկրի կողմերը, ցոյց տայ նրան մշակելու, հերկելու, պահելու եղանակը: Ո՞ղ այդ հարցին պատասխանէ մեր ուսեալ դասը, դա նրան է միայն վերաբերվում: Մինչև այժմ հայ ուսումնականները չեն կարողացել որ և է բարոյական կապ հիմնել իրանց և ժողովրդի մէջ, չեն ունեցել հեղինակելու, ինիցիատօր լինելու միջոց, այլ միշտ աշխատել են պահել իրանց ժողովրդից բարձր, մեր ինտելլիգենցիային յատուկ պճնամոլութեամբ և հպարտ արիստօկրատիկական վեհանձնութեամբ:

Ա՛երջացնելով յօդուածս, պարտք եմ համարում յայտնել շնորհակալութիւնս շուշիաբնակ Պ. Յովսէփ Մէլիք-Շահնազարեանցին, որից ստացել եմ յիշեալ երկու արձանագրութիւնները և մասամբ տեղեկութիւնները Խարևաճաուի մասին:

# ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

## ՇՈՒՇԻ

Գրիգոր Հարությանյան։
Մովսես Շահնազարեանց։
Սմբատ Հովհաննիսյան։
Տիկին Աննա Հովհաննիսյան։
Շաւարշ Հովհաննիսյան։
Արտաշես Հովհաննիսյան։
Գաբրիել Ղուկասեանց։
Թաչատուր Փանոսեանց։
Բախշի Յովհաննիսեանց։
Դանիել Տէր Դանիելեանց։
Կոնստանտին Կրասիլնիկեանց։
Գրիգոր Եաղուբեանց։
Գալուստ Մահտեսի-Մարտիրոսեանց։
Յովսէփ Մահտեսի-Յակոբեանց։
Սանթուր Աբրահամեանց։
Միքայել Խանլարեանց։
Յովհաննէս Ադամեանց։
Մնացական Խունդունց։

## ԳԷՕԿՉԱՅ

(Բազուայ նահանգ)

Դաւիթ Լէկ Ալոյեանց, Նուխեցի։
Աղաջան Ադամեանց, Բոզովանդեցի։
Գալուստ Անտոնեանց, Շամախեցի։
Սեդրակ Իւզբաշեանց, Վանքեցի։
Աղասի Կէօկչայեանց, Շամախեցի։

Նոյնը Նուիրում է. Շամախու ժառանգաւորանին 2 օր.
և օրիորդ Սոնիչկայ Կիսկիչեանցին, Բագու 2 օր.
Տիկին Սօֆիա Մատինեանց, Գանձակեցի
Նուիրում է Ղալակու կնեաց. դպրոցին 2 հատ
Տրզատ Մատինեանց, Գանձակեցի.
Սարգիս Մանուկեանց, Շամախեցի.
Խրիստափոր Նազարեանց, Շամախեցի.
Ներսէս Տէր Մարտիրոսեանց, Հնդաբցի.
Բալասի Տէր Գաւազարեանց, Ղալաչեցի.
Հայրապետ Տէր Զաքարեանց, Սուլթան Նուխեցի.
Սամուէլ Տէր Սահակեանց, Ղալաչեցի.
Յարութիւն Տէր Մարկոսեան, Ղալաչեցի.
Նիկողայոս Դ. Քալաշեանց, Սաղիանցի
Նուիրում է.
Օրիորդ Ովսաննա Կնէյնեանցին 2 հատ
Օրիորդք Մարգարտ և Աննա Կնէյնեանցներին 1 հատ
Աննա և Մաշինկա Քալաշեանցներին 1 հատ
Սաղեան (գիւղ) Հոգևոր դպրոցին 1 հատ
Ալէքսանդր Քալաշեանցին, Թիֆլիս 1 հատ
Սահակ Քալաշեանցին, Ախալցխա 1 հատ

ԲԱԳՈՒ.

Սարգիս Շիրազեանց.
Սահակ Տէր Վահանեանց.
Արշակ Մախմուրեանց.
Յովհ. Տէր Սարգսեանց.
Սամուէլ Դիլքաբեանց.
Պետրոս Վարդանեանց.
Տիգրան Կոստանդեանեանց.
,, Շամխալեանց.
Գաբրիէլ Միրզաբէկեանց.

Սարգիս Բաբայեանց։
Մ. Շաթրեանց։
Աղէքս. Նիազեանց։
Ներսէս Բահաթրեանց։

ԼԻՆՔՈՐԱՆ.

Զաքմայը Տէր Դաւթեանց։
Նոյնը. 1 օր. Նուիրում է
Աստուածատուր Մալխասեանցին և
1 օր. Թաղլաբի ուսումնարանին։
Սարգիս Լալաբէկեանց։
Մարգար Սահակեանց։
Նիկոլայ Նազարբէկեանց։